

30

8
u-50



8-1(082)

Ա-46

2 NOV 2009

ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ

Զանազան ———
Թարգմանությունք



ՏՊԱՐԱՆ ԾԱՆԹ

ՂԱՆԱԹԻԱ

1911

ԶԱՆԱԶԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

30

8
U-50

2005

ՄԵՐՏԻՉ ԱՃԻՄԵԱՆ

800
142-114

Usp

164

ՋԱՆԱՋԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

ՀԱՆՐԱՊԵՏԱՆ, ՏՊԱՐԱՆ «ՇԱՆԹ» — 25

1001
261





ՄԿՐՅԻՉ ԱՋԷՄԵԱՆ

ՎԵՐՅՈՒՇՈՒՄ

Տիար Յովհաննէս Պաթմանիկ

Տեսում է հոգիս... տեսում դառնապես,
 Քաղդին խաղեր զիս քրին յոռեսես,
 Այլ եւրս չունիմ ուրախ բաբախում...
 Ո՛հ անհունապես հոգիս է տեսում:

Ո՛հ տայր ինձ չունել դեպի Վենետիկ
 Որուն կարօտեն փղծկելով սաստիկ
 Կը յուզուիմ յանախ՝ ժպտուն անխռով
 Մանկական կեանքիս յիշատակներով:

Ո՛հ տայր ինձ տեսնել այն մեղկ ու ծփուն
 Ափունքն ու լսել այս երգն ոլորուն,*
 «Երկինքն է անամպ, հաւնդարս է ծովն ալ,
 Երբանք կոնօթով բացուիլ զովանալ»:

* Կ'անհնարիէ հետեւեալ ժողովրդական երգը.

*Non gheze nuvola,
 Ze queto el mar,
 Andemo in gondola
 A respirar.*

Ահա ճանաչենք այն վեհ հոյակապ,
Կոնսօլներն ահա՝ սեւ քաւէ կարապ,
Ահա Սուրբ Մարկոս, Լիսօն ու Բիցան
Ձերդ չքնաղ երազ աչքս սահեցան:

Ո՛ր ճայր ինձ երբալ համբուրել այն հող
Որ ծածկէ սիրուած մեր հայր բերրող,
Նւ սիրել բուռ բուռ վարդեր ու շուշան
Հոն ուր կը հանգչի անմահն Ալիւան:

Ո՛րքան աշխարհիս վայելքն են անձուկ -
Ա՛յ ի՞նչու փառիմ կեանքին վաղանցուկ -
Լո՛յս աւեճաքեր ե՛րբ պիտի ծագիս
Մուր գերեզմանէն... ՏՏՏՏՏ է հոգիս:

Մ. ԱՃԷՄԵԱՆ

10 Յունվար 1911



ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ

Մկրտիչ Աճէմեան ծնած է 19 Յուլիս 1838 ին ի Միջագետք (Կ. Պոլիս) եւ իբրեւ լուսաւորչական Եկեղ. դաւակ յաճախած է ի մանկութեան Ս. Թարգմանչաց ազդ. նախակրթարանը: Բնաւանդը յաջորդաբար Պոլիս եւ Բերս փոխադրուելով՝ Մայր Եկեղեցւոյ եւ Բերսի ազդ. նախակրթարաններն ալ յաճախած է, եւ ի վերջոյ Միթարեանց վարժարանը ի Սաբըզ Աղաձ ուր ստացած է իբր նախնական ուսումն եւ ուր դնահատուելով աշակերտին ուշիմութիւնը վերնետիւղ Ռափայելեան վարժարանը ղրկուած է 1852 թուականին:

Սոյն վարժարանի Դ. Դատու աշակերտ, դասակից ունենալով Թ. Թերզեան, Դէորդ Ապտուլահ, Սրապիոն Թղլեան եւ այլք, ընդհանուր ուսմանց եւ իւզաների պատկերահանութեան մէջ յաջող հանդիսացած, եւ ամբողջ վեց տարւոյ շրջանին մէջ բարեբաղդութիւնն ունեցած է աշակերտի վ. Ն. Դ. Ալիշանի որ նոյն ժամանակ կ'աւանդէր հայկաբանութեան, գրականութեան եւ պատմութեան դասերը:

Ուսումնաւարտ 1858 ին Պոլիս վերադարձած՝ տարի մը յետոյ Հեռաբրական վարչութեան մէջ ընդունուելով պաշտօններ կը վարէ հետզհետէ դաւաւները, ի վաթոնա, Շիօտրա եւ վառնա: 1866 ին Աղաթօն Դրեւոր էֆ. ի վարչութեան միջոցին Պոլիս վերադառնալով ամուսնացած է Տիկին Լյուրու Երամեանի ազգականուհի եւ հազէսեան գերդաստանի շուռաւիզ Օր. Հեւդինէ Միւնէվէրի հետ յորմէ ունեցած է չորս դաւակ՝ երկու մանչ եւ երկու աղջիկ:

Հեռագրութեան պաշտօնին մէջ աստիճանաբար յառաջանալով 1872 է մինչեւ 1875 Բերայի Հեռագրատան տնօրէն եւ ասպա փոխադրուելով ի Կեդրոնական Վարչութիւն ճարտարագէտներու սենեակին տնօրէն կարգուած է, պաշտօն զոր վարած է մինչեւ 1908, այսինքն Սահմանադրութեան վերահաստատման թուականը: Այդ միջոցին Բերայի Հեռագրատան պաշտօնէից մէջ ծագած շփոթութիւնքն բարեկարգելու համար Վարչութիւնը գինքը նոյն Հեռագրատան վերստին տնօրէն անուանեց ուր 13 ամիս եւս պաշտօնավարելով հանդստեան կոչուեցաւ՝ գրեթէ կէս դար ուղղամտութեամբ եւ հաւատարմաբար ծառայելէ յետոյ, իր ձեռքին մէջ իր բաղմամբ աշակերտներէն միշտ սիրուած եւ յարգուած:

Ազգ. շրջանակի մէջ փոքր դեր ունեցած է, իբրեւ Ազգ. Ընդհանուր Ժողովոյ երեսփոխան 1867-68 ին եւ իբրեւ Թաղական Խորհուրդներու քննադատ ի Պէշիկթաշ եւ ի Բերայ:

Իր գրական կեանքը կը սկսի 1871 էն. երկերը են «Վահագն», գրաբար դիւցազներգութիւն. «Ժպիտ եւ Արտասուք, հրատարակեալք ծախքով արքունի ճարտարապետ Յակոբ պէյ Պալեանի: «Լոյս եւ Ստուերք», «Գարնան Հովեր», երկու հատուրիկներ հրատարակեալք 1887 ին եւ 1892 ին, իր անձնական ծախքով, Թարգմանութիւնք. Լամբնէի «Իւրք Ժողովրդեան» եւ «Զայն ի Բանտէ» հրատարակեալք 1870 ին:

Իր քերթումները գրեթէ ամբողջութեամբ հրատարակուեցան 1908 ին Տիար Յովհաննէս Պալեանի ինքնաբերաբար աւաջարկութեամբ եւ ծախքով: Սոյն աղնիւ անձնաւորութիւնը հիացող մի եղած է Աճէմեանի քերթումներուն:

Ներկայ զմայազան Թարգմանութեանց հաստիքին տալու գրական ծախքն ալ փախաք յայտնած եւ ինք հողացած է: Այս առթիւ հեղինակին ուղղեալ իր վերջին նամակին մէջ Տիար Պալեան այսպէս կը գրէ: «Ուրախ եմ որ ձեր հմայիչ յանգերը ընթերցող հասարակութեան զմայլումին եւ վայելումին ներկա յայնչելու պատիւը՝ ըստ աւաջնագոյն ձեր աղնիւ խոստման, ինձ կընծայէք որոյ համար հաճեցէք ընդունիլ ջերմաջերմ բարեկամական համբոյրներս»:



ԲԱՆԱՍՏԵՂԾԸ



Ժամանակակից քերթողներու ծերօն կաղնիի յիշատակը կ'արթնցնէ իմ մէջս, որուն հովուերգական մարմանդին շուրջը դեղերելով, կը թերթեմ իր քնարերգակ էջերը, ուսկից կը թուին դարնան հովերուն հետ՝ խուսկի բուրումններ, լոյսի ստուերի անրջանքին մէջ կ'ուզես հիացումով ապրիլ:

Իր ո՞ր մէկ քերթումէն սկսիմ նիւթ առնել դրական վերլուծումներու: Սրինգ ի ձեռքին, քերթողական բուրաստանին մէջ բանաստեղծը ման եկաւ, ցանեց ու փիթեցուց երգի ու համբոյրի ծաղիկներ, և արեւմուտքի յաղթականի օրերուն քաղցրը ըրաւ անոնց. մո՞տ ու պատկառելի փունջ մը բանաստեղծական՝ իր տաճար յիշատակին առջեւ արեւուն հետ պիտի սոյրի:



Երբ կը կարգամ գեղեցիկ քերթումներ. կը դարմանամ թէ ինչո՞ւ էմ. Հարբուր բտած է ««Les plus beaux vers sont ceux qu'on n'écrira jamais»». Սակայն մինչեւ ցարդ դրուած քերթումներուն մէջ ամէն մէկ բանաստեղծէն դտած ենք գեղեցիկը եւ դեղեցկագոյնը, անիրականալի գերբնական քերթումներ:

բուն առանց հետամուտ բլլալու . դիտենք անընդհատ
բու ծաղիկները, որոնց խնկոն բոցրովը անած է բանա-
տեղծ Աճէմեանը :

★

Անցեալին մէջ, առանց մէկնեալի՝ Հայ գրականու-
թիւնը ո՛չ մէկ նշանակութիւն կարող էր ունենալ : Վա-
նական մամուլներէն հախայ երկասիրութիւններ լոյս տե-
սած են, Գողգոթներու, Տառեաններու եւ Տիւղեաննե-
րու նիւթական աջակցութեամբ, գրական սէրը եւ
գրական դէմքեր որքան որ աւելցան մեր մէջ, այնքան
դժբախտաբար նուաղեցան հիմաւորաց մէկնեաները :

Գրողէտիւն աջակցողները հաղուաբուտ են այժմ, եւ
ընդհանրապէս համեստ նիւթակաւով անհատներն են՝ որ
ձեռք կը կարկուտն լքեալ քերթողին կամ գրողէտին .
եթէ չըլլար գրատէր սիրուած սիրտ մարդ՝ Յովհաննէս
Պալեանը, առկաւին Աճէմեան բանաստեղծ՝ իր քեր-
թուածներուն շարքը հատորի մը մէջ ամբողջուած չէր
տեսներ : Մէկնեալը սիրահարուած է քերթողին քնա-
րին, հիացումը նիւթապէս ալ ցոյց տուաւ :

Բանաստեղծը իր Զօնին մէջ կը խոստովանի Մէկե-
նապին հիացումին արժանի բլլալ :

Մէկ քանի որ առաջ տեսայ զինքը . առաջին տն-
դամն է որ իր ձեռքը կը սեղմէի, կարծես Որիէտի նուի-
րական անտառէն կը յառաջէր դէպի ինձ, եւ պերճա-
շուք համեստութեամբ՝ կը խօսակցէր իր պատկառելի
ծերութեան վրայ . ու ես իր երեւին վրայ չի նշմարեցի
մանկական ժպիտներուն թրամբը, եւ աչուքներուն մէջ
կարդացի ծաւին Աթենասայ դիւթական պարզումը հրա-
շագեղ . այդ աչուքներէն կաթած են արցունքներ սրտա-

բուխ : Իր կեանքին առաւօտը խոնդալաւութիւն է
եղած . ստուերներուն տակ խաղաղ անընդհատ . լսեցինք
իր գարնան հալերը մեղմօրօք, եւ այդ օրօրները իր մէ-
կնեալը հմայեցին : Եւ այդ հմայքին հաւասարիք՝ կրցանք
ամիրտի վայելել զգուտը քնար քերթողին քերթուած-
ներն ի մի հատոր :

★

Ամէն անգամ որ կարդացիք եւ իր «Թրթուուն յաճ-
դերը», կարելի չէ եղած մտքէն ջնջել յաւերժական
հիտաքանչ պարը հեղէն քերթողներու : Աճէմեան կար-
ծեա ընթանը շարքա ու մեղր դրած՝ քեզի կը պատմէ
թէ՝ երբ ինքը նիւտար մաղձոտ տղայ մըն էր, Ապոլոն
վրան զթաղով՝ ձօնած է իրեն անուշ հիւթով սափորիկ
մը հողանիւթ, եւ պատուիրած է իրեն, որ եթէ հողե-
կան տաղնապիւր զինքը շարձարեն՝ ուժակիկ մը՝ չնչէ
այն բոցրէն :

Քերթողը այդ պատուէրին հնազանդ մնալով, երբ
իր հողին մաշուէր սրտում խոնրով, պարզեւած հիւ-
թէն կաթիլ մը կը քամէր . այն կ'ըլլար իր վշտերուն
բալտան . ծերունին այդ սափորը հիմա չորցած կը զգայ,
եւ յուսահատած՝ իր բարերար Ապոլոնին կը զիմէ պա-
ղատալին .

«Ապոլոն, ա՛լ ջախջախէ՛
Այս թափուր սիրալ հողէ,
Կամ նոր խանդով թրթուացուր
Որ գեղգեղեմ հեշտաւոր» :

Սակայն Ապոլոն անգութ չըլլար, անխորտակելի կը
մնայ քնար սիրալ՝ որ առկաւին կը թրթուայ Միտիմար-
եան աշակերտաց ամաթթերթին մէջ :

Մենք զինքը շատ տարիներ առաջ լսած ենք. իր ձայնի քնքշութիւնը ծաղկափայլ հասակէն, մինչեւ ծերութիւն՝ նոյն ներդաշնակութիւնը անխախտ պահած է:

Վարդ մը, անմուղ մանկիկ մը՝ եւ թիթեռնիկ մը՝ իրարու մօտ՝ միասին գործի մէջ եղած պահուն, արդէն արտադրու պատկեր մը կը նկարեն մեր աչքին մէջ, եւ լսանաւորդն է որ այդ պատկերին լեզու կուտայ եւ կը խօսեցնէ: Անմեղ մանկիկը փշոտ վարդին վրայէն թիթեռնիկը բռնեմ բռնելով, փուշը մատները կը խոցէ եւ թիթեռնիկը խոյս կուտայ: Բանաստեղծը այս գրգուռ գէպքէն սա խրատականը կը հանէ.

«Հրա՛նտ երբ բլլաս երեւոտարդ,
Ու գեղուհի շքեղազարդ
Շրջացնէ քու աչքն ու միտ,
Զբլլայ որ կեղծ անոր ժրպիտ
Արեւնոտէ քու սիրտ արկար.
Այդ թիթեռնիկը մի՛ մոռնար»:

Քերթողը միանգամայն նկարիչ մըն է. նկարին մէջ փշուղէինք կենդանութիւն, եւ ինչ որ ալ բլլայ նիւթը պատկերին, հոն երբ կայ շարժում եւ իրականութիւն, ան յաջող զլուխ գործոց մըն է. Աճէմեանին «Մեր կատուն» այդ հրաշալիքներու շարքին մէջ կը դնուի: Երգածը սովորական է, պարզ, սակայն մանրամասնօրէն քննէ իր սա ամէն տողերն, պատկերը երեւակայութեանդ մէջ իրական գոյնով կ'ուրուապրուի, իր կատունին համար կը գրէ.

«Ձարմանք կը շարժեն իր ճիւղ ու սահուն
Մազերը երկայն, նայուածքը խոհուն,
Խնչկէս իր հպարտ կերպարանքը լուրջ,
Ու հիացողներ բոլորն իր շուրջ»:

Փափուկ ձեռքերով շոյեն ու գգուեն Սիրուն կենդանին որ այս պատիւէն Շփացած կ'ուռի ու իր մետաքսէ Թուշը՝ փայփնյող ձեռքէն կը քրտէ: Երբեմն ալ պառկի, ցոյց տալով ճերմակ փորիկ մը կակուզ, փորիկ մը բամպակէ երբ կուշտ է ու գոհ բաղմոցին՝ վրայ, Փռուած օրն ամբողջ ծոյլ ծոյլ քրնանայ: Թէ անունը տա՛մ մարմած ու կէս Աչքերը բանայ, ճօճանակի պէս Պոչը խաղցընէ իրեւ պատասխան. Բայց երբ ըսեն թէ պատրաստ է սեղան, Իրարանցումով ցատկուտէ ուրախ, Կանչ ու մըլաւներ ուղղէ՝ աջ ու ձախ: Նուրբ ճաշակի տէր, պատառը զատէ, Լափելէ առաջ ստէպ հոտոտէ: Յետոյ կշտացած ամենուն դիմաց Սրբունքը անկէ եւ կամաց կամաց Կարմըրուկ լեզուին ծայրոփն անդադար Մազերն յարգարէ՝ սանտրէ վերէն վար՝ Յանդիմանութիւն, գովեստ կամ կատակ, Խորապէս կը զգայ, կ'ըմբռնէ յստակ. Աչքին մէջ կարգաս ամէն ըզդացում՝ Գէն, որամոտութիւն եւ կամ գոհացում: Սակայն գգուանքի ու ճաշի համար Ստեղծուած միայն՝ մեղի ու խղճահար Մեր կատուն չունի՝ համբաւ որսորդի, Թէ մուկ մը տեսնայ լեղին կը փրթի»:

Ուշնան, Ա. Տիւմա, Ե. Տէմիրճիպաշեան յատուկ գուրգուրանք մ'ունեցեր են կատունին, Աճէմեանն ալ այդ գատակարգէն է:

✓✓ Աչուղային ու պարսկական քերթողներու անընդունալէն է ունեցած, երբ երգած է գինիին յաղթանակը:

Քերթողներու խոհմութիւնը հաւատարակչիւ չի

մնար, խանդավառութիւնը իրենց երկնքին փոխորին է, յուզումներու ասեմ, քնարը մտքով չի շարժիր...

Պինին երազներու աշխարհի դռները կը բանայ. և բանաստեղծը կ'երգէ «Երազը». այդ պատկեր մըն է. նէ՛ պատուհանին կռիւնով՝ կ'որոնէ լուսինն երեսը. իր ուսերուն վրայ խօլ հովերուն հետ կը ծածանին մաղերը զլէտ վէտ. և այդ պատկերը հողի ու երգ կ'ունենայ իր նաշխուն թրթռումներով.

«Հորիզոնն մօտ՝ խուրձ մը լուսահեր
Փրփուր ամպերու հանդարտիկ սահէր.
Ամպերուն վերեւ երևցաւ երբօր
Կիսորջ տփղոյն մահիկ լուսին նոր,
Աղջիկը գաղափար մէկ մանրանկար
Պուրս քաշեց կուրծքէն, ու նախ ընդ երկար
Լուսնակին յառեց աչքերն ուշադիր,
Յետոյ պատկերին դարձուց սիրայիւր
Ու կարօտակէզ համբուրելով զայն
Ջերմ աղօթ մ'ի վեր բազմեց լուսնայն»

Քնքուշ էակը ծաղիկներու ընդմէջ զինուցած՝ կը գտցէ աչուքները. փրփուր ամպերուն մէջէն երազներու զիցումնին անոր կը հասնի, կը խօսի, կը խոստանայ կատարել ինչ որ կարօտի կոյսը: Իսկ զեւտտի աղջիկը՝ հուզեր բլլալ ծաղիկ՝ զազաղի զարդ, և ո՛չ թռչնիկ փայլկատուն՝ պատառ որկրամոլին, ո՛չ նաւերուն փարօս պայծառ Արուսեակ, և քննադատներէ ահաբեկ չուղեր բլլալ, և ո՛չ իսկ սիրայաւոր երգիչ, ու արհամարհելով Դիցունիին առաջարկած սքախ ու մտքի ամէն աղմուկ ձգտումներ, անոր ականջին ցած ձայնով հաղիւ կարող կ'ըլլայ յուզուած արտասանել.

«Այդ խորհուրդներ շատ բարձր են ու փեմ,
Անմահ զիցումնի, ես միայն կ'ուզեմ,


Ու դուն խոստացար լընուլ իմ փափար,
Կ'ուզեմ որ ճակատի կապեն հարսի թագ»

Եւ անտարտիկս՝ ամենէն անկեղծ փափաքն է, որ երբէք զայն արտասանած է կոյսը իր ամպով կեանքին մէջ: Վօլթէր կ'ինը կը համարի ամէն հովէն շարժուն եղէգ մը: Սակայն բոտ իս՝ հարսի թագին ասջե կոյսը Սֆինքսի հաստատակամութիւնը ցոյց կուտայ:

Կիներուն վրայ մաշած ենք քերթողներու քնարի լարերը, քերթող ու վիպասան կանանց չփանալուն պատճառ են եղած, և սակայն նոյն այդ գրիչներն են կանանց չարութիւնը անկեղծօրէն խոստովանողները: Չէ՞ որ բռնած է թէ կին է աշխարհք կառավարողը. բայց ընդունելու ենք որ կ'ինը մոլորցնող է. Աճէմսան սքանչելիօրէն կը վերլուծէ կանանց այդ գերը իր այս տողերով: —

«Կին մ'եր հըմայիչ սեւ սեւ աչքերով,
Որք մերթ ցօղէին կամոգի գորով
Ու մերթ ցալաէին բոցեր ու փայլակ...
Շուրջը սեղանին սարքած ղեղխարար
Բախէին գինւոյ դաւաթներ հաղար,
Եւ որտալով երգեր սիրազեղ
Բաբոս և Աստղիկ պարէին մեկտեղ,
Հոն հրապուրիչ իր մարմնոյ պատկեր
Աշրշիւ հիւրերուն արեւն բորբոքէր,
Եւ իր վաճառած համբոյր հեշտայիւր,
Որ լիտի կարաւ, փաղաքշանք պատիր
Չօրողին սփռէին աւեր և աւար.
Գանձեր կը լափէր ու չէր յաղենար.
Սիրտեր յօշոտեր և սիրան էր խաղաղ,
Հոգի մը ճղգմէլ՝ այդ իր անմղ խաղ
Իր մեծ հաճոյքն էր ու գողցես լուծէր
Հինաւուրց մեկ վրէժ՝ երբ աղանձս ծեր

1001
1926



Պատուէր բզըքտէր վարդէ եղունգով,
Արիւննին ծըծէր փափուկ շրթունքով
Կաթիլ առ կաթիլ...»:

Մարդկութիւնը այնքան բարի չէ այդ չար կինե-
րուն ներողամբա ըլլալու համար, թող անոնք իրենց
սե հոգին վանքին սե պատերուն մէջ թաղեն, բայց
խաբուած մարդկութիւնը անոր ճակատին վրայ չարու-
թեան արտաք ջնջուած չի նկատեր: Աճէմեանի այս
քերթուածին առաջին կէսը կը յիշեցնէ Թօլսթոյի «Մե-
ղաւորուհին»: Սակայն Թօլսթոյ աւելի ռոմանթիք է,
իսկ Աճէմեան կատարեալ հոգեբան նկարիչ է եղած:

★

Վշտահար մայրերուն սուգի կրակը մարելու հա-
մար, կը դիմենք քերթողներու ախտիչ քնարին: Ան-
տարակոյս Աճէմեան իր սրտադրաւ միտթարական քեր-
թուածովը՝ կրցաւ թաղել Տիկին Վ. Պ. Կիւլպէնկեանի
ծով վշտերը: Մայր ըլլա՛լ, ախտաութեան դուռ բա-
նա՛լ... Այդպէս պիտի ըսէ լքեալ հոգին. դժբաղդ է
նորաստի մայրը, երբ իր աղուոր մանկիկը շուտով փոս
կը դնեն. ի՞նչ կ'ըլլայ անոր հոգեակը:

«Գիշեր մը թերեւ հանգեալ լուսնակին
Դուն հաճաշեցի կարօտով՝ անձկաւ
Ու հաւաքիք մէջ հոգեակն հալեցաւ»:

Մօր հառաջներով՝ հոգեակներ կը հալին, մօր ար-
ցունքով հոգեակներու հիւլէներ կը ծածկուին, այս
երկիւղը կը դգայ փափկաւիրա քերթողը:

Իերթող սիրտը չարութիւն կը կարծէ անհաւատու-

թիւնը, անկէ կը զգուշանայ եւ կը զգուշացնէ մանուկը
եւ կրխատարդը:

Երեմանսարդ դու ցնորեք գնով՝
Ի զուր պարծենաս թէ հաւատքն է սուտ,
Եւ այր կատարեալ գիտութեանց յենլով
Ի զուր գոչես թէ կրօնքն է անօգուտ»:

Բանաստեղծը չի թողուր յուսոյ թերթերը վետե-
լու, հոգին ջնջելու:

Հայաստանցի մայրիկը իր մանկիկը արթնցնելու
համար, ունի աշուղային ժողովրդական երգը. Պոլսե-
ցին ալ թող բերանացի սորվի ու երգէ իր մանկիկի ան-
կողնին վրայ՝ Աճէմեանի «Արթնցի՛ր»-ին առաջին ստ
պարբերութիւնը.

Արշալոյսն իր վարդէ փրփուր
Յանէ ճակտիք վերայ մաքուր,
Ու դեփեւուն շունչն անգրանիկ
Շոյէ մաղբրդ ցանուցիւր,
Դեռ քրնանա՛ս մըշիկ մըշիկ
Այգն է ծագեր, ա՛լ արթնցի՛ր»

Երբ լեռները ոսկի չապիկ կը հագուին, ա՛յս թող
ըլլայ Պոլսեցի մայրերուն առաւօտեան դարթիքի երգը:
Հանգիստներ կան, որ յաւիտենական հանգիստը կը
վրդովեն, այդ հանգստութիւնը խօլ հեշտանքով դե-
նովցած՝ չար հանգիստն է. վեհափառութիւն մը կ'առնէ
քերթողին քնարը իր այս տխրատու տողերուն մէջ.

«Ափսո՛ս, հազուադիւս ձերքերդ ու տաղանդ
Անհեա փճագան, ափսո՛ս քեզ Յրուանդ,
Որ զուարթ հոգւոյդ ծագիկներ մի մի
Փետեցի դուն քու ձեռքով թշնամի»

Տենդը մոլեգին՝ հաճոյքին հրապոյր
Անդունդը մըղեց ըզքեզ իրբե կոյր.
Ճըղակաոր ըրիր կեանքդ արդէն խարխուլ»

Երիտասարդութիւնը կեանքի խօլ յորձանքն է,
խոհեմը միայն կարող է ճողոպրիկ անոր մահացու պատ-
րանքներէն: Կոյսը հարսնութեան պատրաստուելուն՝ կը
կարծէ երջանկութեան արշալոյսին մէջ թեւեւ սառած-
նելով, սակայն Աճէմեանի «Հարսնացուն» հովատական
հողերանութեամբ տխրանոյ՝ կ'ախտապ այդ երջան-
կութիւնը, կ'երդէ հարսնացու աղջիկը.

«Ներսըս կրակ կը մըխայ,
Խերիկ չունի գեղ՝ նուսխայ՝
Վախ սերն ինչ է չգիտես,
Մայր քար մը կախէ ճիւղէս
Ու երթամ հըլու հըլու
Արգաւոր հաբս ըլլալու»

Սրցունքները իր հարսնիքին օժիտ ըրած՝ կոյսը հարս-
նութեան կ'երթայ. վա՛յ անյօժար հաբս դացողին:

Պէշիկթաշեանի «Գոհարիկ»-ի երգին պէս զմայլելի
է փափկիկ «Արփինէ»-ի երգը.

«Արգեօք շուշան գաբնանային
Թէ պատկերն է լուսնիային,
Հո՞վ թէ մետաքս է մաղին թեյ՝
Ես չեմ կրնար զանազանել»

Իր քնքուշիկ բերան կըլոր
Գաղկի բաժակ մ'է գոգաւոր,
Երբ ձգելով ձայն մը սիրուն
Կը սկսի շարքն իր երգերուն:

Ու նուրբ խարտեաշօքներուն տակ՝
Աչքերը խայտ ու կապուտակ
Բացունին գոցուն համեսօրէն,
Մինչ գովեստով զինքն օրօրեն:

Երբ պարտեղին մէջ կուգայ ման՝
Ճիշեր լսուն սքանչուցման.
Սիրահարներ ծեր թէ տըհոտ
Դուրջը շարուած կ'ընեն գարպաս:

Իր գիրգ ձեռքին եղայ գերի
Որ պատառիկ մ'է համբուրի.
Բայց ոյն ձեռքով չարածըճի
Ձիս կ'ապտակէ առանց խըղճի:

Մերկ սրունքներ ցոյց տայ լիտի,
Ես կը սաստեմ՝ նէ կը փափի.
Բայց ի՞նչ, կ'ուզէ՞ք որ ամաչէ,
Արփինէն գեռ տասն ամսու չէ»

Պատկերին մէջ գիրգ դոյներ ունի, ամպղջովին
Ներդաշնակութիւն է, պարզ, շատ պարզ քերթուած
մըն է, գլխաւը կը խտանայ «Արփինէն գեռ տասն ամսու
չէ» անակնկալ տողին մէջ:

Խրոխտ եւ կճող կրկնմանքի յայտնի մէկ օրինակը
կը տանուի քերթողին «Ապղլուն» բանաստեղծութեան
մէջ, ժամանակակից նվաթապաշտ քերթողներն եւ ան-
դրապէտ լրագրապետները՝ իրր բարեկենդանի նուէր՝
հարուածներ բնութեամբ են այդ քերթուածէն: Անկողչ
դրապիտաց բաժին էր հանած իր սա սողերը:

«Թէ որ մանուկ էիք երրոր
Մուսայք չըսին ձեզի օրոր,
Ի՞նչ չէք կրնար ըլլալ պուշտ,
Ա՛յլ շատ շատ խեղճ լրագրապետ
Կամ քննադատ մը գարշելի,
Թուղթ մըրոտող՝ ստնի չաբ շըլի
Օ՛ն թղուկներ դացէ՛ք ի բայ...»

Դիտելի գործոց գրաբար քերթուածներ, նուրբ եւ
խորին գաղափարով չքնաղ հատորներ՝ հաղածանք կը

կրեն եւ դարը կը հիւրասիրէ իրապաշտ դպրոցը • պատ-
նասական անտէր տաճարին տէրը անոնք կ'ըլլան :

«Իրապաշտներ անկէ ի վեր
Գրաւեցին տաճարն անտէր,
Ուր պարգեցին յայտնի որոշ
Բարեւոնեան լեզուի դրօշ,
Եւ ալ անկէ ի վեր ափսոս
Մեր դպրութիւնն է մէկ քառոս»:

Ամէն գրող որ հասակը կ'առնէ, իր գործունէու-
թեան անցեալ չըջանը ոտի՛ր դար կը նկատէ • դեռատի-
չըջանին մէջ քառս միայն կը տեսնէ, այս յուստեստու-
թիւնը ամէն գրողի յատուկ է արդէն :

Աճէմեանի («Մոլուն վրայ» քերթուածը Հիւկոյեան
չունչով գրուած է : Անխորձ աղջիկներուն խրատական
ու երգիծական քերթուած մը նուիրած է «Փերրոն ու
իր Մամը» վերնագրով : Բարձրերուն զո՛ւ կ'ըլլայ ժամու-
նակակից անօժիտ աղջիկը :

Աղջիկ մը թէ չունի օփա
Պէտք է ըլլայ հընարմիտ.
Խնքնօգնութեամբ՝ փայտէ քարէ
Պէտք է իրեն էրիկ ճարէ»:

Անոնց սիրտը ըստ քերթողին լաց պարտէզ մըն է,
ու երբ ուղողը ներս կը հրամնէ, յուսախաբութիւններէ
վերջ, անոնք կ'ըմբռնեն որ ա՛լ սրտի դուռը լաց թող-
նելու չէ :

★

Կը փոխուի պատկերը :

Աչուն է, մոլեղին հովը՝ ծովը ցամաքին կը խառնէ,
եւ աւաղի հատերուն պէս, ծառերուն տերեւները կը

տարածէ հեռուն : Աչուն է • մշուն է պատած արտն ու
բլուր • ո՛ր այլ եւս դաշտերուն ճերմակ ու կարմիր
փայլուն դեղը : Մաղիկները խամրած կը մսին : Գիշեր է •
վե՛հ պատկերահան մը կ'ըլլայ քերթողը •

«Նուլթեան համայն տարեքն ալ հանգչին,
Ու միայն վերէն կը հսկէ Խաչին
Պայծառ լուսնկան որ զուտ արծըթէ
Խաչին պէս անուշ շողեր կաթկըծէ»:

Քերթողը այս խորհրդաւոր պատկերէն կը հետեւցնէ
գաղտնիարական հոգեբանութիւն մը •

Սիրտն ալ՝ դարձան մէջ ծաղիկ լուսափայլ՝
Չորցընեն աշնան հովերն ու մեայլ •
Ու միայն Խաչին լշտին պէս պայծառ՝
Յոյս մը կ'օրօրէ, կը պահէ զայն վառ»:

Խամարթին սիրումն է Աճէմեանին • հայ քերթողը
անոր պէս նկարագրեղ պատկերներ ստեղծած է, իր լե-
զուն երգ մըն է, սրտապրառ երգ :

Նկարիչ ու քերթող՝ հարազատ քոյր եւ եղբայր
են • մէկը միւսէն դերադատ համարուելու չեն, երկուքն
ալ համահաւասար սիրելի են զիրոք աշուքներուն : Քեր-
թողը ընտրած ու յղիւում կոկ բառերով կը ստեղծէ
մտքի նկար մը • զխոնջէք •

«Մունգ ծունգի վրայ՝ գիրկը մանաօլին՝
Գլուխը հակած մանները թելին
Նուազէ աղջիկն աշխոյժով համակ,
Ձեռք մը ցոյց տալով ձիւնի պէս ճերմակ»:

Ու մանաօլինին գողգոջուն շէշտին
Սուր պատուիկներ հեւ հեւ թռչնաթին •
Մէջը պահուած մէկ հուրի անտես
Զըւարթ քրքիչներ արձակէ կարծես»:

Գործին կը դարձնէ, սիրտը կը պարէ, լարերէն ճըլ ճըլ կը հոսի ձայնը գլխակաւան. ու մատիկն արծարծող յանկարծ կը դադրի, դուցէ ասեղով հայկն ետեւէն է ինկած:

Քերթողը նման ուրիշ քնար սրտերու ունեցած է թաղմանական «Վերջին փախաք»ը. երբ քնար սիլոս մը այդ փախաքնի վերջը լսողդ կ'ունենայ երգելու, ընա- կանաքար փախաքներն անլիւրջ մը մնան: Կը մտնի մայրիկը՝ թողնելով սրբիկներ. այդ մահը քերթողին սիրտը թռնող կը հանէ. իր այտերէն ալ տաք տաք ար- տասուք կաթեցնելով՝ սխուր յուզումներով կը սրի երգել:

«Ես ցարդ ապրեցայ անշուք եւ աղքատ,
Յեւին մէջ երբեք չը դբի ճակատ.
Ու երբոր մեռնիմ, զաւակներս իմ դուք
Իմ թաղումս ըրէք աղքատ եւ անշուք.
Ձեր անկեղծ սիրոյ արցունքի շիթեր
Պարզուկ գագաղիս ըլլան ճոխ զարդեր.
Ձեզ ժառանգ թողումս ոչ գոհար ու գանձ
Այլ հարստութիւն աղնիւ զգացմանց...»

Իր հողակոյտին վրայ կ'ուզէ որ շարին վարդեր գունազեղ, վասն զի վարդը շատ սիրած է ու երգած: Վարդի թուփերով կ'ուզէ որ իր հողակոյտին վրայ խո- րան կաղմն. ծաղիկներու հեշտ բայրովը կը փախաքի որ հրճուի իր թախառիկ հողին:

Իր «Առեղծուած»ի պարզ հարցերովը կեանքի մը- շուշը կ'ուզէ յուզել. անցեալին մէջ ցցուած կը տեսնէ կեանքի ասեղծուածը, անցեալը կը դառնէ երազներով ծիծղուն, իսկ ներկայն պատրանքներով բեղուն. եւ նկատելով որ մարդուս կեանքը անծայր ծովուն մէջ կաթիլ մըն է, կը հարցնէ թէ կ'արմէ՞ տալիկ, եւ ան-

տարակոյս տալելու է՝ վարժելով անուշին ու լեղին հաւասարապէս: Կեանքը քառս մըն է, ուր տառապանքն ու վայելքը՝ զիրար կը հալածեն, կամ համահաւասար ներդաշնակ կ'ապրին. քերթողը շատ խոհական կը տես- նեմ սա գաղափարին մէջ:

«Թէ ճնշէ սակայն դիս կեանքին պայքար
Ծըռեմ եղեգին պէս գլուխըս տկար...»

Կեանքին մըրիկը չարդ լուր իր հողւոյն ձգտում- ները եւ ինքը դարձեալ աղատորէն իր երգը կը շարուն- ակէ:

«Երբ քնար համուրեմ վարդին լանջ քնքուշ
Ի՛նչ փոթ թէ շրթունքս արեւնէ սուր փուշ
Խեղճ փիլիսոփայք՝ ի զուր կը յոգնիք,
Կեանքը կը լուծուի լայց ո՛չ իր գաղանիք»:

Հիացումով կարդացած եմ այն քերթուածներն, ուր սիրուող քնարներ՝ փոխադարձաբար իրարու վրայ մոգական սքանչացում ու գուրդուրանք ցոյց են տուած. Հիւլիօ՝ Շէքսպիրի, Լամարթին՝ Պայրընի, Պէշիկիսպեանի՝ Ալիշանի՝ վրայ հիացած են. սոգէսները միայն հիացում չունին. երբ Պոլսոյ իմաստակ դրազէս խմբակը կսկիւ- ղավիզ կ'անդամներ Եգիպ Տէմիրճիպաշեանի քնարը, հուշակ ու համբաւ ստացող Աճէմեանը կը գրէր զնահա- տումի սա տողերը Եգիպի հասչէին.

«Իր մեղեդիներ՝ մշտահոս հեղեղ,
Իր շարականներ ոճով գունազեղ,
Արձագանգ կուտան սարէն ու ձորէն
Ու հմայելով սրտեր հովահրէն»

Իր մեղմադէիկ հոգին՝ սուղ պարգեւ
Դեռ ընկճեալ չէ ճոխ տաղանդին ներքեւ,
Եղեան սիրուած ու ոսկեղենիկ
Մեր գուսանն է միշտ, մեր հաւն է փիւնիկ»:

Հայ գրականութեան մէջ թարմ ծաղիկներ փթթեցնողը ըստ Աճէմեանի՝ Նզիա Տէմիրճիպաշեանն է եւ լաժ : Իսկ ինքն ալ քնքուշ զգացումներու անոյշ թարգմանը . ինքն իր վրայ չունի անախառ մտքեր , ծուէն մը թուղթին յանձնուած է իր քերթուածները , եղած է իր Մուսային զուարթութեան եւ տրամութեան ուղիղ թարգմանը , ժպիտով երգած է կեանքին երազները պատիր . քերթուածներուն մէջ սրտէն թափեր է զսրտի , եւ արցունքները սրբեր է վարդի թերթերով : Ծաղիկներու տակ կը թաղէ կողակցին մարմինը եւ սուր փուշերու ներքեւ կը թաղուի իր սէրտը :

Պէրանժէն իր մէջ պաշտում մ'ունի , ինչ որ բնական է բանաստեղծ հոգի Պ . Մերուժան Պարոտեան , որ կ'ըսէ . « Աճէմեան մեր Պէրանժէն է . անոր թերութիւնները ունենալու էր՝ անոր յատկութիւններն ալ ունենալու համար : Ժողովրդին բանաստեղծն է ան . զգացում եւ պարզութիւն բառական եղած են իրեն՝ տպրելու համար » : Զի միանանք ըսելու , որ Աճէմեան ունի նաեւ ձեւի գոտական հմայք : Յանդերովը վարպետ է , ինչպէս իր վարպետ ուսուցիչը Նահապետ մեծ քերթողը Հ . Ալիշան :

Աճէմեանի քնարին լեզուն՝ ընտանի է : հոգեզանաութիւնը արշալուսային պարզութիւն . փափուկ քերթողներու անուշին խալութիւնը իր սրտին ստիպելն մէջ խտացած է :

ԱՏԲՈՒՇԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ե Ր Գ

Ինչ փոքր ե իմ լսել
Անհառաց մեջ բռնիկ ,
Թռչնիկէն առաւել
Քաղցր ե քո դայալիկ :

Թո՛ղ ամպոս կամ պայծառ
Հոլովին ասեղունք .
Քան ասդեր լուսավառ
Միշտ փայլին քո աչկունք :

Նորոգէ քո՛ղ Ապրիլ
Ծաղիկներ մեր քփոց .
Ծաղիկ մ'ալ նորածիլ
Փրփի միշտ ի քո ծոց :

Այդ ասդեր գեղալոյս ,
Ո՛ւ բռնիկ քաղցրանիչ ,
Այդ ծաղիկ հոգեբոյս ,
Մեր սերն ե նրմայիչ :

Վ. Հիւկօ

Հ Ն Ձ Ե Ա Կ

Կեանքիս զաղսնիք, հողւոյս խորհուրդն է ծածուկ
Վայրկենի մեջ ծրնունդ առած սէր մ'անբաւ.
Վերէն անդարման է ու կրեմ անխօսուկ,
Կին մը տուաւ զայն բայց երբէք չզիսցաւ:

Այսպէս կ'անցնիմ մօտէն՝ աչքէն ալ անտես,
Միտք միմաւոր եմ՝ քեպէս միտք իրեն հով,
Երկրիս վրայ կեանքս պիտի կնքեմ ես
Ոչինչ հայցել կամ ընդունիլ յուսալով:

Նե՛ք՝ զոր երկին ստեղծեց զողոր եւ հրլու,
Կ'ուղեւորի անփոքր՝ առանց լսելու
Մրմունջ սիրոյ որ փայտունն շուրջ գնդու:

Իր խիստ պարսփին հաւատարիմ՝ երկիւղած,
Երբոր կարդայ իրմով առլի այս փերուած,
«Ո՞վ է այդ կին» պիտի յարէ անկասկած:

Ֆելիս Սարգիս

Հ Ո Ւ Ն Ը

Գետին մեջէն անցնիլ պարս էր,
Մեր կացութիւնն էր դժուարին,
Ես վեհերոս՝ նե հրապարս էր.
Լսուէր քոչնոց երգն յանտառին:

Ըսաւ ինձ. «Ես ետեւեղ գամ,
Դուն մի՛ նայիր հոս, բարեկամ.»
Յետոյ հանեց իր գուլպաներ,
Գետին մեջէն անցնիլ պարս էր:

Զը նայեցայ... բայց միայն մեկ
Անգամ տեսայ՝ փայլուն ջուրին
Մեջ՝ ձիւնաքոյր ոտքեր բեկբեկ.
Մեր կացութիւնն էր դժուարին:

Յասկեր ֆարէ ֆար՝ դողդոջուն,
Թեւ տալ իրեն անհրաժեշտ էր,
Կրմբունք մեր տալեալն անհուն,
Ես վեհերոս՝ նե հրապարս էր:

Կարծեմ քե տֆը սանելով,
Ճիշ մը հանեց զերդ ծիծառին,
Ու վազեցի ընդոս իր հով.
Լսուէր քոչնոց երգն յանտառին:

Ն. Բայրոն

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ԱՆՕԹԸ

Անօրն ուր այս ծաղիկ մարի,
ձեղձեց՝ զարկ մը հողմանարի,
Հարուածն հազիւ շօշափեց զայն,
Չի լսուեցաւ փոհրիկ մեկ ձայն:

Բայց բերել վերքն այդ՝ խաճնելով
Բիւրեղին կուրծքը ամեն օր,
Հեհնով մ'անցես ու ապահով
Յուշիկ դարձաւ շուրջը բոլոր:

Իր գով ջուրն է կաք կաք հոսած,
Ա՛լ ծաղկին հիւրը ցամաք է,
Տակաւին մարդ չունի կասկած,
Մի՛ դպչիք, ան խորհակուած է:

Յանախս այսպէս ձեռք մը սիրեալ
Շոյելով սիրեն՝ հոն վերք բանայ.
Յետոյ ինքնին պատռի սիրեն ալ,
Ու իր սիրոյն ծաղիկ չորնայ:

Միշտ աշխարհի հանդեպ ժպտուն,
Զգայ իբ վերքը յարանուն՝
Նուրբ ու խորին, ու լայ գաղտնիկ.
Ան խորհակուած է, մի՛ դպչիք:

ՍԻՄԻՆ ԲԵՐԿՈՒՄ

ԱՌ Թ. ԹԷՐԶԵԱՆ

Դու զիս կ'եսամբես, ազնիւ բարեկամ,
Թէ հին ընկերներս ես շուտ կը մոռնամ:
Նքէ տակաւին երակներուդ մէջ,
Բանաստեղծական վառի հուրն անեղ,
“Իմ հագուսն,, աղէ՛ կարդա՛ եւ տես՝ քե
Մոռանալ զեղ ես կրնամ միքէ:

ԻՄ ՀԱԳՈՒՍԸ

Ո՛վ իմ խեղն հագուստ, անուշ բարեկամ,
Թեպէտ պատահուն, հին իբրեւ Աղամ,
Բայց յաջող քե վատ երկար տարիներ,
Դուն եղած ես իմ անբաժան ընկեր.
Սիրեմ յիշատակդ ո՛վ իմ հագուստ հեհ,
Մերկանալ զեղ չեմ ուզեր երբեք:
Անձնական փորձով ես զիտեմ արդէն՝
Այս դարու մէջ մարդն հագուստէն դատեն.
Սա ազնուականն որ անա տեսնա՝
Որ կը զգենու նուրբ եւ հարուստ կերպաս,
Թէ հագուստն առնես՝ կրնա՞ս հաւատալ դուն
Իր շարժունակէն Ասպէտ մ'ըլլալուն.
Ո՛ւր է այն բնաշնորհ, այն նախկին տիպար,

Այն կացը վեհանձն ու հաղափար:
 Առաջ խեղճ կանանց կանգնեին պաշտպան,
 Իրենց կնոջ իսկ հիմա ձեռն կուտան:
 Շատեր բարկանան ու հանեն ալմուկ
 Թե չ'ըսեն իրենց "Տեր Վսեմաշուհ,,
 Բայց այդ սիսդոսին գեթ արժանաւոր
 Ի՞նչ ունին քե ոչ հազուս փառաւոր.
 Ռամիկն ալ անմիտ իրենի կոսքի
 Գիտէ՞ք ի՞նչ բանի առջեւ... հազուսի՛.
 Այսպէս ընդ առաջ այն աւանակին,
 Երբ արձան ոսկի վերայ շալակին
 Բեռցած կը սաներ հեզիկն արարած՝,
 Երկիր պագաներ ամբոխն երկիւղած:
 Սիրական հազուս, երբեք չ'երեւար
 Ուտեռուս վերեւ սին փառքի համար,
 Ոչ փոխան պարսէի հաշկոտեցար դուն,
 Զի քեպէս հինցած՝ քեպէս պատառուն,
 Բայց քսանց շահովն իմ օրինաւոր,
 Եւ վնարեցի արժեքդ բոլոր:
 Թեւեռուս ծայրէն կախուին քեյ դերձան,
 Ատոնք վաղեմի փառացս են նշան,
 Զոր մաշեցուցի՝ երբ խանդով վառուած,
 Դրեցի աշխոյժ տալեր ու հերքուած:
 Շուտ շուտ դառնալով այս կողմ եւ կամ այն,
 Օձիփս ալ տեսի կերուած է. սակայն,
 Այդ չի պատճառեք փնծի վիշտ կամ հոգ.
 Ո՛հ ընդհակառակն յիշեմ բերկրանոց,
 Այն զուարթ օրեր յորում շատ չ'հնադ
 Մեկ օրիորդի սիրս քրի մասադ,
 Մօրն ու աղջկան եւ նստած մեջ տեղ,

Բարեկրթութեան նամածայն՝ շատ հեղ,
 Մերք ասոր եւ մերք անոր հետ ուրախ,
 Շաղակրատէի, ու զլսուս յանախ
 Դարձարձն անիծեց խեղիկն օձիփս.
 Է՛հ ի՞նչ ընեմ երբ բոլորուին չորս դիս,
 Տիկնայք գեղեցիկ. արձան մը չեմ լուռ,
 Այլ շարժիմ խօսիմ խնդամ կուտ ու կուռ,
 Եւ քե որ այսպէս օձիփս աւրուի,
 Է՛հ համբերութիւն, օձիփս փոխուի:
 Հոս ուր ծայլուի հազուսն իր վրայ՝
 Մտամոտիս մօտ՝ կոճակ մը չիկայ.
 Տասնէն ինը հաս մնացին հիմա,
 Ո՛վ անմահ մուսայք՝ ձեր քիւն է տհա:
 Մտակի յուսով՝ դասարկ ու ժպուր,
 Գրպանս որոնեմ սեպ՝ բայց ի գուր.
 Եւ սակայն ասոր համար չեմ ցաւիր.
 Մանաւանդ կրկին աշխուժով ու ժիր,
 Կը գրեմ ու դրամ կը շահիմ հալալ,
 Ի՞նչ աղուոր բան է բանաստեղծ բլլալ:
 Ո՛վ իմ պատճառն հազուս սիրական,
 Իմ երջանկութեան դու եղար պատճառ,
 Ուսի կը սիրեմ՝ ուրախ եւ կայտառ,
 Բեզի հետ ապրիլ՝ ազնիւ մտերիմ,
 Զի հեզմով նանչնալ մարդիկը սովորիմ:
 Երբոր վայելուչ եւ դեռ գեղեցիկ,
 Դուռն կը փայլէիր՝ այն քեքեւտովի,
 Ընկերութեանց մեջ, ինծի ամեն ոք,
 Գլխարկ կը հաներ խորին յարգանոց.
 Ուր որ երբայի գլուխ բարձր ու սեգ,
 Կ'ըսէին ինծի, "Մանկ վեր նրամեցեք,,

Խօսեին ինծի նե՛ս մեծսունք ալ,
Ծառայք կոչեին զիս վսեմափայլ:
Ափսո՛ս իմ հագուստ, բարեկամ ազնիւ,
Քեզի տունին այս փառք ու պատիւ,
Հիմա տու տեղիլ գունաս պատահուն,
Այլ եւս հրապուրեք աչքեր ոչ մեկուն:
Շատ տեղ երեսիս ստուան կոտորաւ,
«Ասանկ հագուստով ներս մտնալ չըլլար»,
Երբ այցի երբամ, ծառան կը գոչե,
«Է՛ն ձեզի համար էֆենտին հոս չե»,
Ամենքն ալ զգոյժ կը փախչին հովիւ,
Կը վախճան քե փոխ ստակ խնդրեմ ես
Գնեղու համար մեկ վերարկու նոր:
Ո՛վ իմ խեղճ հագուստ՝ հին կտոր կտոր,
Կը տեսնաս հիմա, բարեկամ ազնիւ,
Թե տեղ տունին այն փառք ու պատիւ:
Բայց տեղեք գոն եմ, բարի մտերիմ,
Ձի տեղումը ճանչնալ մարդիկը սուրբիմ:

Լ. Կուսանիօլի
(Խառնաչե Բանաստեղծ)

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԱՂԻԿ

Մերթիւն մեջ կորսուած՝ կը տեսնա՞ս սա հեք բոչուն...
Գերեզման ոտքերուն տակ, գերեզման վերեւ գլխուն,
Մորբերաց փոքորիկին՝ իր բոչով դիմադրեք ան...
Ո՛ւր կը դիմես հեք բոչնիկ... հորիզոնն է անհուն, տե՛ս...
Անդադար վերսկսի՝ մինչ վերջացած դուն կարծե՛ս,
Անծայրածիր եմ երկինք, անծայրածիր Ովկիան:

Մեւեռած աչքով դիտեք ամպը որ շուտ շուտ սուրայ
Ուր դադարիլ կամելով՝ անդունդին մեջ բարձրանայ,
Ու անդունդին մեջ տեսնայ լայնելի բացուած իր դամբան...
Այն փրփրացող ալիքին վրայ որբուիլ կը ցանկար
Գոնեք միայն մեկ ռուպէ, սակայն ափսո՛ս ան կըզգար,
Թե փոքորիկն ամենի պիտի լալիւր այդ որբան:

Վազե՛ օ՛ն, հո՛վ կատաղի խզե՛ ու բե՛ր ժայռերէն,
Այն սունկերը ծաղկաւե՛ս որ եզերքներն համբուրեն,
Ու մահամեծք բոչնիկին շինե՛ կողքեակ փրկարար...
Չնչին շիւղ մ'իւրեն բաւե... յարդի երկու նուրբ տերեւ,
Հերիք էին իր բոյնին... փետուրն է այնքան քեթեւ
Որ սոսկ ծաղիկ մ'ալ իւրեն փրկութեան կըլլայ պատուար:

Թո՛ղ վայրկեանիկ մը միայն փափուկ մարմինն ու փոքրիկ
Գոնեք քառի ու հանգչի որ զօրանայ իր քեւիկ,
Ու մինչեւ լոյս կարեմայ կոհակին դեմ մահառիկ.
Գուցէ վաղիւ կը ծագի արեալոյսը վարդագոյն...
Գուցէ սիրով շողազարդ պիտի գտնայ ան իր բոյն,
Եւ բնավայրն հայրենի ուր միշտ յաւիթի փքրի ծիլ:

Գիշերն հասաւ... դեռ քոչի... եւ իր միակ արուսեակ
 Փայլակն է որ պատահեւ երկնքին ֆողն անյասակ.
 Փայլակէն առաջնորդեալ փախչի... փախչի անդադար...
 Բայց յանկարծ կոհակներուն ընդհարումին մեջ սաստիկ,
 Յանկարծ հովուն կոծին մեջ՝ ձայն մը հնչե հեղձուցիկ...
 Վերջին հառաչ քոչնիկին խաւարին մեջ՝ հոգեվար...:

Գրութիւն, ես քոչնիկն եմ փոքորիկէն տարուբեր...
 Թո՛ղ աչեքուդ մեջ աղւոր գտնեմ քիչ մը քաջալեր...
 Այս անսահման ծովուն մեջ եղի՛ր ծաղիկն իմ յուսոյ,
 Ծովուն ամեն մէկ կոհակ երազ մը՝ յոյս մը ծածկէ...
 Կուրծքիդ վրայ քո՛ղ մոռնամ իմ կսկիծն ալ մէկ րոպէ...
 Ու մերիկին մեջ դարձեալ կը խոյանամ ես յետոյ:

Ա. Եղիշ Թալաւո

ՊԵՐԱՆԺԷԻ ԵՐԳԵՐ

ԱՄԻՐԱՆ

Արեւն՝ կիցս է իմ պատիւ,
 Անուշակ է բիբն աչքին,
 Եւ շահեցայ իր շնորհիւ,
 Բարեկամ անձ մը անգին.
 Մեր հարսնիքին իրիկուն,
 Ամիրայ մը եկաւ տուն:
 Փառք տեղայ
 Իմ վրայ:
 Այս ինչ բաղդ է, Ամիրա՛յ,
 Ես ըլլամ ձեր նուաս ծառայ:

Կնամեծար այս մարդուն
 Բարութեանց ցանկը բռնեմ.
 Նախարարի պարտուն,
 Տարաւ ձմեռը զԱրեւն.
 Համբան տեսնայ զիս երբոր,
 Չեմքս սղմե զօրաւոր:

Փառք տեղայ
 Իմ վրայ,
 Այս ինչ բաղդ է, Ամիրա՛յ,
 Ես ըլլամ ձեր նուաս ծառայ:

Կնոջս ե միտս հնազանդ,
Ոչ ապուլե ե ոչ տղիս .
Երբոր Արեւմտե ե հիւանդ
Բիւքէր խաղայ ինձի հետ,
Համբուրե զիս կաղանդին,
Շնորհաւորե ծնունդին:

Փառք տեղայ

Իմ վրայ,

Այս ինչ բաղդ ե, Ամիրայ,
Ես ըլլամ ձեր նուաս ծառայ:

Երբոր անձեւ ե կամ հով
Եւ փակուիլ տան մեջ պարս ե,
Կ'ըսէ սիրուն ծիծաղով,
«Ե՛լ սիրելիս պրտքէ,
«Ինչո՞ւ այդպէս կը բաշտիս,
«Վարդ սպասէ կառնով ձիս»:

Փառք տեղայ

Իմ վրայ,

Այս ինչ բաղդ ե, Ամիրայ,
Ես ըլլամ ձեր նուաս ծառայ:

Գիշեր մ'իւր տուն տալու մեզ
Ուր հրամցուց ինձ առաս
Շամբանեաներ փրփրադէզ .
Կինս անկողին շէկեց զաւ,
Բայց ի՛նչ փոյթ բանգի բողին
Ինձ տանն ընկիր անկողին:

Փառք տեղայ

Իմ վրայ,

Այս ինչ բաղդ ե, Ամիրայ,
Ես ըլլամ ձեր նուաս ծառայ:

Մանչ մը տուաւ ինձ Աստուած
Որուն եղաւ կնիսհար .
Երբ պագնէ զիմ նոր ծնած,
Արցունք բափէ նրնուարար,
Եւ որդիս այն օրուրնէ
Իւր ժառանգորդն անուանէ:

Փառք տեղայ

Իմ վրայ,

Այս ինչ բաղդ ե, Ամիրայ,
Ես ըլլամ ձեր նուաս ծառայ:

Սիրէ խնդալ, խմել լաւ .
Սակայն զինուով երբ տալան
Կես մը կասակ կես իրաւ
Կ'ըսեն իրեն, «բարեկամ,
«Կարծէ ամեն մարդ հաստաւ,
«Թէ դու կրնես զիս կ...ս:»

Փառք տեղայ

Իմ վրայ,

Այս ինչ բաղդ ե, Ամիրայ,
Ես ըլլամ ձեր նուաս ծառայ:

Մ Ա Մ Ի Կ Ս

Իմ մամիկս իր տոնին գիշեր՝
 Խնայով զուտ գիցի մեկ մաս,
 Կ'քսեք ու գլուխը կը շարժեք,
 Սիրող երբեմն ունեի շատ .

Բազուկն իմ կլոր,
 Մուկն իմ աղւոր,
 Անցած գացած ժամ,
 Ո՛րչափ ձեզ կ'ողբամ :

Մամի՛կ, միթե՞ չեիր խելօք .
 — Ոչ, դեռ տարիս եր տասներեք,
 Արդուդարդիս տանի հոգ,
 Զունեի փուն գիշերն երբեք .

Բազուկն իմ կլոր
 Մուկն իմ աղւոր,
 Անցած գացած ժամ,
 Ո՛րչափ ձեզ կ'ողբամ :

Մամի՛կ, փափուկ եր սիրտ փափուկ .
 — Այնքան փափուկ զոր՝ տանելից
 Տարու էի գրաւեց տոսրով,
 Եւ շատ երկար ալ չըստասեց .

Բազուկն իմ կլոր
 Մուկն իմ աղւոր,
 Անցած գացած ժամ,
 Ո՛րչափ ձեզ կ'ողբամ :

Մամի՛կ, տոսրովն եր լոկ սիրականդ .
 — Այո՛, բայց չորս ամիս միայն,
 Զի յաջորդեց իրեն Բիւզանդ,
 Եւ գոն քիթ քե այս քե այն :
 Բազուկն իմ կլոր
 Մուկն իմ աղւոր,
 Անցած գացած ժամ,
 Ո՛րչափ ձեզ կ'ողբամ :

Մամի՛կ, երկու սիրող մեկտեղ .
 — Բայց երկուքն ալ զիս խաբեցին,
 Ես խորամանկ եւ իբր անմեղ,
 Եղայ պապուն ձեր ամուսին .
 Բազուկն իմ կլոր
 Մուկն իմ աղւոր,
 Անցած գացած ժամ,
 Ո՛րչափ ձեզ կ'ողբամ :

Ծընողդ ի՞նչ քսին, մամիկ .
 — Ոչինչ, բայց մեկ ուշիմ երիկ,
 Դատել կարող եր կեղեւեն,
 Թե նաքած եր հաւկիթն արդեն :
 Բազուկն իմ կլոր
 Մուկն իմ աղւոր,
 Անցած գացած ժամ,
 Ո՛րչափ ձեզ կ'ողբամ :

Հաւատարիմ եղա՞ր գոնե՞
 — Ա՛ն այդ գաղտնիք մ'ե իմ սրտի,
 Զոր՝ մինչ Աստուած հոգիս չ'առնե,
 Տեքերն իսկ ոչ զիսեայ պիտի :

Բազուկն իմ կլոր
 Մրունգն իմ աղւոր,
 Անցած գացած ժամ,
 Ո՛րչափ ձեզ կ'ողբամ:

Մամի՛կ, շա՛տ ուշ եղար անհեռ,
 — Սյո՛ւ, բայց փառք բնութեանս ուրախ,
 Սկեղեցիքն քեւեւ նոր չեռ,
 Սուրբը սօնել զային յանախ:

Բազուկն իմ կլոր
 Մրունգն իմ աղւոր,
 Անցած գացած ժամ,
 Ո՛րչափ ձեզ կ'ողբամ:

Մամ, քեզի՞ եմք հետեւելու.
 — Է՛ն զաւակներս, քե քրի ես
 Մամիկիս պէս, ո՞վ կ'արգելու,
 Որ ընեմք դուք ալ ինձի պէս:

Բազուկն իմ կլոր,
 Մրունգն իմ աղւոր,
 Անցած գացած ժամ,
 Որչա՛փ ձեզ կ'ողբամ:

ԿՈՅՐ ՄԱՅՐԸ

Մանե՛կ կսաւդ օրն ողջոյն,
 Եւ ինձ լաւ ուշ դի՛ւր, Արեւմ.
 Բաբախե սիրս տո զիսեմ,
 Յանուն Թովմասս պատանւոյն.
 Մերժե՛, իր խրատը զաղտուկ,
 Կոյր բայց հսկեմ քեզ ծածուկ,
 Լսեմ ամեն ձեր շունկ,
 Ինչ եմ ալդ խոր հառաչներ,
 Նենգաւոր մ'ե քու Թովմասս...
 ..Բայց պատահանք բանաս,
 Արեւմ, կսաւ չես մաներ:

Փափաքիս օդ ծրծել զով,
 Պատահանեմ ոչ միքե՞
 Թովմասին որ քեզ դիտեմ,
 Նայիս անուշ աչքերով.
 Գեղ՝ կ'եսամբեմ արեւմբ պաղ
 Զի էի ես ալ չքնաղ,
 Եւ աշխարհիս մեջ աւա՛ղ,
 Գիտեմ քե երբ իշխեմ սեր,
 Կը սխալիմք շատ դիւրաւ...
 Բայց մեկն անա ներս մտաւ.
 Արեւմ, կսաւ չես մաներ:

Պատասխանես քե քամին,
 ձոնչել տայ դուռը բաց,
 Եւ սասես շունս իմ կամաց
 Որ չարտաքսե քեւամին,

Հաւսա՛ զի եմ փորձառու,
Վաղը Թովմաս քեզ քողու,
Եւ թէ չըլլաս զգաս դու,
Օր մը կ'ողբաս քո ձիրքեր...
Բայց ինչ լսեմ, Տէր Աստուած,
Ձեռն համբուրի ձայն մը ցած.
Արեւմ, կսաւ չես մաներ:

Բայց քու քոչնիկն է կ'ըսես
Որ զքեզ կը համբուրէ.
Ըսե՛ որ քո՛ղ համբերէ,
Ու զգուշանայ զայրոյթէս.
Ա՛ն ընթացիկդ քու յիմար,
Հետեւանն է համբաւ չար.
Ըզեզ պաշտող սիրահար
Յետոյ ծաղրէ անարբեր,
Խոհեմ եղի՛ր ու պարկեշտ...
Բայց յանկողինդ դիմես շեշտ,
Արեւմ, կսաւ չես մաներ:

Ննջել կամիս՝ քսես սուտ,
Ի՞նչ, զիս ծաղրե՛ս, խաբեբայ
Թովմաս հոս է. կամ փեսայ
Ըլլայ քեզ, կամ երբայ շուտ.
Մինչեւ որ քու սիրական,
Ձի տայ քեզի տաշ նշան,
Նստե՛ քովիկս անբաժան,
Մանե՛, այս է իմ պատուեր,
Ի զուր ջանաս ռոփիդ քեզ
Ուրիշին հետ շփոթել.
Ոչ Արեւմ, ոչ չես մաներ:

ԲԱՐԻՆ ԱՍՏՈՒԱԾ

Արքնալով օր մը Աստուած
Յիշեց զքեզ ոգւով գրած,
Բիթն երկնցուց պատահանէն.—
Միթե՞ կորան, միթե՞ ողջ եմ,
Ըսաւ, երկիրս տեսաւ հեռուն,
Որ կը դառնար մուր մեկ անկիւն.
Թէ որ զիտեմ հոն ինչ կ'ընեն կրկան,
Կանչեց Տէր, քո՛ղ առնէ հոգիս սասանան,
Այո՛, առնէ հոգիս սասանան:

Սառած, տապկած, ներմակ կամ սեւ,
Մարդիկ, տուի ձեզ մեկուկ ձեւ,
Դուքեց Աստուած հայրախնամ.
Կըսեն թէ զձեզ ես կը հոգամ.
Փառք Աստուծոյ կրնամ տեսնալ
Թէ ես ունիմ դեսպաններ ալ.
Բայց թէ չարտաքսեմ մի քանի իշխան,
Որդեակք իմ քո՛ղ առնէ հոգիս սասանան,
Այո՛, առնէ հոգիս սասանան:

Գինի տուի ձեզ եւ աղջիկ,
Որ հետ տարիք ու երջանիկ.
Թողուկ խնդան իմ մօրուկիս,
Տէր զօրութեանց կոչելով զիս,
Եւ յանդգնին յանուն իմ սուրբ,
Բաշտել ձեզի դեմ սուր եւ ռուբ.
Թէ երբեք մարտից եղած եմ պաշտպան

Որդեակի իմ քո՛ղ առնե հոգիս սասանան,
Այո՛, առնե հոգիս սասանան:

Ինչ այդ պնենալ գանաններ ծոյլ,
Յարոռ նստե եմ ոսկեծոյլ,
Իւղած գոռոզ հակաս հոցին,
Կարծեն՝ պե՛տք ձեռ մրցիւնցին
Թե օրհնութեամբս օրհնաւոր,
Եւ իմ շնորհիւ եմ քաղաւոր.
Թե ինձմէ ստացե եմ քաղ գաւազան,
Որդեակի իմ քո՛ղ առնե հոգիս սասանան,
Այո՛, առնե հոգիս սասանան:

Կան եւ ուրիշ քզուկներ քուխ,
Որ իջիս սան բուրվառով ծուխ,
Որ կը փոխեն կեանքն ի պահ մեծ,
Եւ յանուն իմ տեղան անեծ.
Ճառեք գրեն որ աղւոր եմ,
Բայց ինձ համար երբայերեմ,
Թե որ կ'ըմբռնեմ ինչ որ կը կարդան,
Որդեակի իմ, քո՛ղ առնե հոգիս սասանան,
Այո՛, առնե հոգիս սասանան:

Մի՛ գանգաւիք որդեակի ինձ դեմ,
Ես լոկ բարի սրտե կ'ընտրեմ.
Մի՛ վախճա՛մ չեմ զձեզ խեղդեր,
Կեանք վարեցե՛ք զուարթ ի սեր,
Ծաղրելով նոխքն ու ֆանաւայք...
Լրտես կուգան, բարեաւ մնայք.
Թե երբեք բանամ ասոնց դուռն իմ սան,
Որդեակի իմ, քո՛ղ առնե հոգիս սասանան,
Այո՛, առնե հոգիս սասանան:

ԲԱՆԱԼԻՔ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

Սուրբ Պետրոս օր մը բանլիքներ
Արքայութեան կորուսած եր.
(Զարմանալի վեպ արդարեւ.)
Երբոր Նունեայ կանցներ հոնկեց
Ծոցէն գաղտնի զանոնք խլեց.

«Կուգես իբրեւ

Ապուռ ծաղրեն զիս. բե՛ր հոս,
Նունեայ, բանալիս», կըսէր սուրբ Պետրոս:

Անմիջապէս վազէ Նունեայ
Երկնից դռներն երկու բանայ.
(Զարմանալի վեպ արդարեւ.)
Շատ կեղծաւոր եւ անառակ
Արքայութիւն մեան շիտակ.

«Կուգես իբրեւ

Ապուռ ծաղրեն զիս. բե՛ր հոս,
Նունեայ, բանալիս», կըսէր սուրբ Պետրոս:

Նայիս յանկարծ երգելով զան
Տանիկ, հրեայ, բողոքական.
(Զարմանալի վեպ արդարեւ.)
Յետոյ Պապ մը՝ հաւատոյ տար
Որ անուրէժ դուրս պիտի մնար.

«Կուգես իբրեւ

Ապուռ ծաղրեն զիս. բե՛ր հոս,
Նունեայ, բանալիս», կըսէր սուրբ Պետրոս:

Նունեայ տեսնե՝ ցաւ ի սրժին
Թե օխուսեանք ալ նկրտին,
(Զարմանալի վեպ արդարեւ)
Եւ անտեսիկ յառաջ գալով
Նրբան նստին հրեշտակաց փով:

«Կուգես իբրեւ
Ապուռ ծաղրեն զիս. բե՛ր հոս,
Նունեայ, բանալիս», կրսեք սուրբ Պետրոս:

Ի զուր խենդ մը կը բողոքեմ,
Աստուած, կրսեք, անողոք ե.
(Զարմանալի վեպ արդարեւ.)
Սասանան իսկ մտաւ արձակ
Սուրբ մը եղաւ կոտորապսակ:

«Կուգես իբրեւ
Ապուռ ծաղրեն զիս. բե՛ր հոս,
Նունեայ, բանալիս», կրսեք սուրբ Պետրոս:

Աստուած ջնջել վնոտ զոժովս,
Բեղզեբուխին չպահե՛ ոխ.
(Զարմանալի վեպ արդարեւ.)
Ամենքն հաւատին, լինին հրշու,
Ա՛լ պէտք չկայ մարդ այրելու:

«Կուգես իբրեւ
Ապուռ ծաղրեն զիս. բե՛ր հոս,
Նունեայ, բանալիս», կրսեք սուրբ Պետրոս:

Երկինքին մեջ եղաւ ցնծում,
Պետրոս չուզէ մնալ տեսում.
(Զարմանալի վեպ արդարեւ.)
Բայց անոնք որ զրկած եր նա

Դուռն երեսին գոցեն հիմա.

«Կուգես իբրեւ
Ապուռ ծաղրեն զիս. բե՛ր հոս,
Նունեայ, բանալիս», կրսեք սուրբ Պետրոս:

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԱՂԶԿԱՆՑ

Ի՛նչ միամիտ մարդ է Խորեն
 Որ սուրբ գիրքը մեզի մեկնե .
 Ասեղ բեղի այդ սնորհն
 Մա՛յր, յիրաւի ապուռ մեկն է:
 Թասրոն, նուագ, պարահանդես
 Լաւ քան զամեն եւն վարժարան.
 Թրալա լա լա, աղջկունք այսպէս,
 Թրալա լա լա կը զարգանան:

Փափաք չունիմ կար կարելու,
 Երբամ, մայր իմ, զարնեմ դաշնակ.
 Երբ նուագիս գայ դասասու
 Երգենք մեկեւեղ երգ մ'անուշակ,
 Երակներուս մեջ կըզգամ ես
 Սիրոյ կայծակն ելեֆրական.
 Թրալա լա լա, աղջկունք այսպէս,
 Թրալա լա լա կը զարգանան:

Գլուխ չունիմ ես հաշուի հետ .
 Մայր իմ, միայն ծամ մը գոնե
 Թո՛ղ որ պարին իմ վարժապետ
 Ինձ նոր մեկ քայլ սորվեցրնե,
 Վեր առնելով մինչ ծունգիս կես
 Շրջագետիս պոչեր երկան.
 Թրալա լա լա, աղջկունք այսպէս,
 Թրալա լա լա կը զարգանան:

Թո՛ղ ուրիշ մը հսկե, մայր իմ
 Եւ խնամե Բոյրս փոքրիկ .
 Ես գծագրել պիտի սորվիմ
 Սա հրեշտակին դիմք գեղեցիկ .
 Ո՛հ ինչ աղւոր մարմին է, տե՛ս
 Մերկ անդամներ ձիւնի նման .
 Թրալա լա լա աղջկունք այսպէս
 Թրալա լա լա կը զարգանան:

Մայրիկ, պէտք է ամուսնանամ
 Սովորութեանը համեմատ .
 Շիտակն ըսեմ քեզ, բարեկամ,
 Ասիպեալ իսկ է գործը շատ .
 Ի՛նչ փորձանքներ անցան գլխես,
 Գիտես շատեր ու կը խնդան .
 Թրալա լա լա աղջկունք այսպէս
 Թրալա լա լա կը զարգանան:

ՈՂՋ ՄԵՌԵԱԼԸ

Երբ պաշարեն զիս հոգ տալուս եւ կասկած՝
 Հոգւոց քսեք, քանզի մեռած եմ մեռած.
 Բայց երբ հանոյք, բերկրանք առաս եւ պէս պէս
 Ողորդեն զիս առջեւս ու ետեւս,
 Ո՛հ այն ասեմ ողջ եմ ողջ
 Հոգւով մարմնով իմ ամբողջ:

Թե ոսկիներն համրեւ ապուշեմ անգգած՝
 Հոգւոց քսեք, քանզի մեռած եմ մեռած.
 Բայց երբ հարկ ե զիմեւ լրայ ընդ երկար
 Ճառել խօսիլ իմաստօրեն ու նարսար,
 Ո՛հ այն ասեմ ողջ եմ ողջ
 Հոգւով մարմնով իմ ամբողջ:

Երբ կարգադրեն բաղդը քուառ իշխանաց՝
 Հոգւոց քսեք, քանզի մեռած եմ մեռած.
 Թե նստած շուրջ վառարանին փոյկ փոյլ
 Բաժակ ի ձեռն հարկ ե մրցիլ կոնծելով,
 Ո՛հ այն ասեմ ողջ եմ ողջ
 Հոգւով մարմնով իմ ամբողջ:

Իմաստակներ երբ դեմս հանեւ չար դիպումս.
 Հոգւոց քսեք, քանզի մեռած եմ մեռած.
 Բայց երբ առանց պարծենալու հարկ լինի
 Զուարթ երգով տունը գութ եւ գինի,
 Ո՛հ այն ասեմ ողջ եմ ողջ
 Հոգւով մարմնով իմ ամբողջ:

Թե քնաբեր քարոզի մ'եմ բռնուած՝
 Հոգւոց քսեք, քանզի մեռած եմ մեռած.
 Մտեմնութիւն քե խնդրեւ սիրս եռանդուն
 Եւ փոխանակ վանքի հիմնել գինեւուն,
 Ո՛հ այն ասեմ ողջ եմ ողջ
 Հոգւով մարմնով իմ ամբողջ:

Թե սրբազանը ներս մտնայ, Տեւ Աստուած,
 Հոգւոց քսեք, քանզի մեռած եմ մեռած.
 Բայց երբ զիմեւ զաւաթք բախին դեմ ընդ դեմ
 Եւ սեղանին վրայ հասնի գողոր Արեւի,
 Ո՛հ այն ասեմ ողջ եմ ողջ
 Հոգւով մարմնով իմ ամբողջ:

Ռ Ա Մ Ի Կ Ը

Ռամի՛կ ուամի՛կ
Պարզամի՛ս մարդիկ
Սիրով երջանիկ,
Կեցցե՛ ուամիկ:

Հապա՛ երգենք ուամկին գովես.
Ռամիկներ կան ֆանի՛ ազնիւ.
Լուծենք վրեժը մարդուն համես
Ոյր ստացուածն է լոկ պատիւ.

Ռամի՛կ ուամի՛կ
Պարզամի՛ս մարդիկ
Սիրով երջանիկ,
Կեցցե՛ ուամիկ:

Երջանկութիւն՝ աղփասութեան
Ի ծոց միայն արդարեւ կայ.
Վկայ բլլայ Աւետարան,
Զուարթութիւնս բլլայ վկայ:
Ռամի՛կ ուամի՛կ
Պարզամի՛ս մարդիկ
Սիրով երջանիկ,
Կեցցե՛ ուամիկ:

Թշուառութիւնն իսկ Պառնասի
Մեջ տիրած է շատ ժամանակ.
Ո՛յք էին ինչք Հոմերոսի,
Բակեդէք լոկ եւ ցուպ միակ:

Ռամի՛կ ուամի՛կ
Պարզամի՛ս մարդիկ
Սիրով երջանիկ,
Կեցցե՛ ուամիկ:

Եւ դուք որոց կեանքն է բռնաւ,
Հաւատացե՛ք թէ դիւցազն ալ
Ոտքը կօշկէն վիրապատու
Կը փնտռէ զիւր հին սանդալ:
Ռամի՛կ ուամի՛կ
Պարզամի՛ս մարդիկ
Սիրով երջանիկ,
Կեցցե՛ ուամիկ:

Ճոխութիւն որ շրջադրեն՝
Յանախ սանի իշխանքն ախոր.
Տակառին մեջ 'Իրոգիքն
Արհամարհէ զարեայն հօր:
Ռամի՛կ ուամի՛կ
Պարզամի՛ս մարդիկ
Սիրով երջանիկ,
Կեցցե՛ ուամիկ:

Պալատանց ցոլք են հիանալ
Բայց ձանձրութիւն հոն մուտ զտայ.
Լաւագոյն է հանդարտիկ հաւ
Եւ անուշ փուն յարդի վրայ:
Ռամի՛կ ուամի՛կ
Պարզամի՛ս մարդիկ
Սիրով երջանիկ,
Կեցցե՛ ուամիկ:

Ո՞վ ի խճեակին կայր առնու
 Պենելոյ զայն ծաղկոք գարնան .
 Այն ինքն է սէր որ այցելու
 Կ'երթայ զուարթ աղփատութեան:

Ռամիկ՝ ռամիկ
 Պարզամիտ մարդիկ
 Սիրով երջանիկ,
 Կեցցե՛ք ռամիկ:

Մտերմութիւն՝ ժողովրդեան
 Դեռ բնակի յարկին ներքեւ,
 Բախտ գաւաթն ի գինեան
 Նստած երկու ռամկաց միջեւ .

Ռամիկ՝ ռամիկ,
 Պարզամիտ մարդիկ
 Սիրով երջանիկ,
 Կեցցե՛ք ռամիկ:

ԳՈՂՑՈՒԱԾ ՇԻՇԸ

Սէր՝ երեկ յիմ բնակարան
 Սարդելով անբռնուկ,
 Վազեց շիտակ ի մառան
 Գիւնիս գողցաւ կամացուկ .
 Եւ փնարիս հեռալուր
 Զայնն է մարած՝ անհի՛ վեր .
 Օ՛հ Սէր՝ գիւնոյս շիւր տո՛ւր
 Տո՛ւր իմ շիւրն եւ իմ երգեր:

Մղեց գինն յայդ գողութիւն
 Զարանքնին նմոնն .
 Զունիմ այլ եւս այն աւիւն
 Որ ցաւած սիրն սփոփէ .
 Հեծեմ անհուն՝ եւ ժխուր
 Սեւ կասկածն է զիս պատեր .
 Օ՛հ Սէր՝ գիւնոյս շիւր տո՛ւր
 Տո՛ւր իմ շիւրն եւ իմ երգեր:

Սեղանակից եւ զուարթ
 Մի բարեկամ՝ երգելով
 Կարկառե առ իս գաւաթ,
 Խնդրէ լնույ գինի զով .
 Ուրիշ մ'ալ մօտ գայ ի լուր
 Յունկն իմ խնդրել խրատներ .
 Օ՛հ Սէր՝ գիւնոյս շիւր տո՛ւր,
 Տո՛ւր իմ շիւրն եւ իմ երգեր:

Յորչափ Երմոն գինւոյս՝ դեմ
 Կրէր այսփան ան ու վախ,
 Աղջիկ մ'աշխոյժ՝ գեղադեմ
 Պահէր արտիկս իմ ուրախ.
 Արեւմն էր ան՝ սիրուն ճիւր
 Եւ ամուրեաց հետէ ընկեր.
 Օ՛ն Սէր՝ գինւոյս շիւր տո՛ւր,
 Տո՛ւր իմ շիւրն եւ իմ երգեր:

Բայց հուսկ հապա առ իմ ձայն
 Զուարթ գայ Սէրն անգգամ.
 Գինով է նա եւ սակայն
 Զէ խմած չորս մաս անգամ.
 Երմոնէ գողտր է քայլէ
 Բայց ծաղրեմ իր հնարներ,
 Զի Սէր գինւոյս շիւրն ինձ ետ,
 Ետ իմ շիւրն ու իմ երգեր:

ԳԱՐՈՒՆ՝ ԵՒ ԱՇՈՒՆ

Եղանակներ երկու՝ զուարթ
 Առնեն մեր կեանքն յաջորդաբար.
 Գարնան՝ ունիմք գոյնգոյն վարդ,
 Աւնան՝ ունիմք անուշ նեկտար.
 Հետէ օրերուն՝ զարթնու սիրտ մեր,
 Տաք օրերուն՝ խաղողն հասնի.
 Թէ ի գարնան պաշտեմ զսէր,
 Յաւնան երգեմ՝ կեցցե՛ գինի:

Հետեաւէս այս երկու փափագ
 Անուշտ լաւ է յօդել իրար.
 Բայց շատ խմել, սիրել անյագ
 Առողջութեան է վնասակար.
 Իմաստութեամբ ուսի՛մ օրեր
 Վերածելով երկու բաժնի,
 Թէ ի գարնան պաշտեմ զսէր,
 Յաւնան գոչեմ՝ կեցցե՛ գինի:

Մայիս ամսոյն տեսի զՆունեայ
 Որ խաբելով չիրեց արտիս.
 Ի՛նչ փորձանքներ այդ սասանայ
 Բերաւ գլխոյս ճիւղ վեց ամիս.
 Բայց երբ մտանք ի Հսկեսեբեր
 Սիրոյ շղթան խորսակեցի.
 Թէ ի գարնան պաշտեմ զսէր,
 Յաւնան երգեմ՝ կեցցե՛ գինի:

Մերք առնեմ մերք բողոմ հեռեաւ
 Զվարդունին հեղաբարոյ .
 Օր մը վերջին հրաժեշտ տուաւ ,
 Ապա դարձաւ նե շատ յետոյ ,
 Մինչ Բագոսին տալի նուէր .
 Ա՛հ գոչեցի՝ աշուն կ'անցնի .
 Թե ի զարնան երգեմ զսէր
 Յաւնան գոչեմ՝ կեցցե՛ գինի :

Բայց կայ մի այլ հմայիչ կոյս
 Որ զիւր գերին զիս քրած է .
 Նա սանձելով փափաք մարմնոյս
 Գինւոյ ծարաւն յիս արծարծէ .
 Ներս համար զիմ հանոյներ
 Յեղաւրջեմ փոփոխակի .
 Յաւնան գոչեմ ես կեցցե՛ սէր
 Եւ ի զարնան երգեմ զինի :

ԱՍՏՈՒԱԾ ՏԱՅ

Մարգարէի աշօք հասու
 Ես ձիրք ունիմ նշմարելու .
 Մեզ խոստացուած նոր ապագայ .
 Աստուած տալ :

Քերթողք ոչ եւս պիտի լինին ,
 Ոչ եւս հզօր աւագանին
 Շողոքորբաց պիտի հաւատայ .
 Աստուած տալ :

..Ոչ մեծասունք փոքր ու անուր ,
 Պիտի չըլլան ոչ վաշխառուք ,
 Ոչ խաղամուր , ոչ կոշ ծառայ .
 Աստուած տալ :

Այլ եւս անոյշ մտերմութիւն
 Պիտի չըլլայ մի սուտ անուն
 Զախորդութեան մեջ փախստեալ ,
 Աստուած տալ :

Ոչ զգայուն աղջիկներն ալ
 Պիտի ստիպուին ամուսնանալ
 Հոխ դրամօթիս տալով ընծայ .
 Աստուած տալ :

Կինն աւելի պարզ եւ զգաստ
 Պիտի յարգէ զիւր առագաստ
 Երբ ամուսինն է բացակայ .
 Աստուած տալ :

Գրութեանցըն մեջ՝ մասենագիր
Յոյց պիտի տայ նաեակ ընտիր
Մա՛նուր ոճով Արարատայ.

Աստուած տայ:

Ինճնահաւան ոչ վարժապետ
Կամ դերասան իբրու գրագետ
Պիտի բազմի լսկադեմիա.

Աստուած տայ:

Զքերութիւնըս դիւցազանց
Պիտի ծաղրեն գոսանք՝ առանց
Երկնչելու բանս եւ շղթայ.

Աստուած տայ:

Հումարսութիւն գուարբերես
Արդարութեան հետ վերջապես
Պիտի տրեւ երկրիս վրայ.

Աստուած տայ:

Փա՛նք տանք ուսի. այս ամենայն
Իրագործուի պիտի սակայն
Գուցէ՛ հազար տարի ապա.

Աստուած տայ:

ԲԱՐԻ ՊԱՊԸ

Ժամանակաւ երգիծաբան մի երբող
Յիրար խառնած սուրբ գիրքին հետ զառասպել՝
Պապին միոյ կենաց քա՛ծ է ներքող
Զոր փութամ հոս՝ խաչակնեալ հոչակել.
Տե՛ս ինչ կակուղ է անկողինն իմ, կ'ըսեւ
Իր աղախնոյն այս հայրապետ հեշատեւ.

Խնդա՛ աղւոր

Յատկե՛ աղւոր

Մտիս հատոր:

Ունիմ ինչ որ կը պահանջէ Սուրբ Պետրոս,
Մանուկ սերն է ի վաղուց իմ բարեխօս.

Ես եմ յամառ

Եւ անաչառ:

Այո՛ անհաւտ է իմ պաշտօն երկնային.
Թո՛ղ համոզուին նորասերներ սահակ,
Թէ ամենայն ինչ ծառայից ծառային
Պե՛տ է երկրիս վրայ լինի հպատակ.
Յաթոռեն իմ՝ ուր համբառնամ ինճնիշխան
Քաշեմ երկնից վարագուրին կեղծ չուան.

Խնդա՛ աղւոր

Յատկե՛ աղւոր

Մտիս հատոր.

Հաւատացե՛ք թէ այն սերն վեհունի
Որուն՝ գլխոյս խոյրը կ'ըլլայ հովանի.

Ես եմ յամառ

Եւ անաչառ:

Եւ ոչ միքե՛ ժողովուրդն հե՛կ ու բռուառ
 Բազմութիւն մ'է գերեաց իմար եւ դժգոհ
 Որք գժսութեամբ՝ Տգիսութեամբ միշտ յամառ
 Այս եւ կամ այն կուսակցութեանց կ'ըլլան զոն,
 Եւ մինչ աղէտք իրենց գլխուն ծանրանան՝
 Ինձ պարգեւէ Աստուած բարիք բազմազան.

Խնդա՛ աղւոր

Ցասկե՛ աղւոր

Մրժիս հասոր.

Հողաբափիս մեջ մեման ոտք Աստղկան,
 Բազոս լնու օրհնեալ ջրոյս աւազան.

Ես եմ յամառ

Եւ անաչառ:

Ի՞նչ են արեայք. արարածներ լոկ իմար
 Կամ աւազակք խոխսացեալ սուտ փառօք,
 Տիտղոսներով ծածկեն, ոնիրք անհամար,
 Եւ կը մղեն զիրար ի մարտ անողոք.
 Ի գին ոսկւոյ ներողութեան չամ կոնդակ
 Եւ կամ անոնց քաղը փոխեմ ի զսակ.

Խնդա՛ աղւոր

Ցասկե՛ աղւոր

Մրժիս հասոր.

Իմ շանքերէն ահա երկիր տայ դղորդ,
 Արամազդ զիս կարգեր է իւր փոխանորդ.

Ես եմ յամառ

Եւ անաչառ:

Բայց գայթակղիչ այդ պատմագիրն յաւելու
 Թէ այս բարի պապն ըսեր է ի վերջոյ.
 Ա՛լ բողոքն սերն եւ հոգ տանինք ուսելու,

Զի կարծեմ քէ յոյժ քաղցած է ազգ մարդոյ.
 Նրք անաւոր եր կացութիւնն ու վայրկեան
 Սուրբ Պետրոս ալ սուրբ դրաւ ի պատեան.

Խնդա՛ աղւոր

Ցասկե՛ աղւոր

Մրժիս հասոր.

Ես անսխալ ըլլալէ ա՛լ ձանձրացայ,
 Զերդ Հերիւլլէս կասարեցի գործ հսկայ.

Ես եմ յամառ

Եւ անաչառ:

ԳԹՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐ

Նոյն ինքն Ասուած
Պասուիրէ հայրաբար
Որ սիրենք միտ գիրար
Եւ ըլլանք ողորմած:

Քոյր գթութեան մի կոյս պառաւ
Վախճանելով՝ արհայութեան
Դրան առջեւ պատահեցաւ
Զ նաղ աշխոյժ մի աղջկան
Որ գրասրունն ի սուգ բողոյր.
Ի քես սիրոյ եւ հրեշտակաց
Զոյգ հոգեակներն այն սիրաբոյր
Սուրբ Պետրոսի ելան դիմաց.

Նոյն ինքն Ասուած
Պասուիրէ հայրաբար
Որ սիրենք միտ գիրար
Եւ ըլլանք ողորմած:

Ի խրհիթի՝ ի պալատան
Ըսաւ նախ փոյրն, ես իմ ձեռով
Զտելով մեղրն ու բալասան
Ամոհեցի ցաւն ու մորմոհ:
Աղջիկն ըսաւ. ես նշաւակ
Ընէի զսեգ աւագանին,
Կարօտելոյն ճալի զբաժակ
Որով արեայք արքեմային.

Նոյն ինքն Ասուած
Պասուիրէ հայրաբար
Որ սիրենք միտ գիրար
Եւ ըլլանք ողորմած:

Այո՛ կրկնէ կոյսն հոգեւոր՝
Լաւ քան կրօնից հեղգ պատօնեան,
Մահկանացուաց ճալի յորդոր
Խաղաղ իջնել ի գերեզման.
Իսկ ես ըսաւ չննաղն աղջիկ,
Որորէի հոգիքն անկոյս՝
Հետ պատրանով եւ երջանիկ
Թուէր, նոցա կեանքն ի հանոյս:

Նոյն ինքն Ասուած
Պասուիրէ հայրաբար
Որ սիրենք միտ գիրար
Եւ ըլլանք ողորմած:

Ես մուրալով, կոյսն լաւելու,
Ողորմութիւն հարուստներէ՝
Կը բաշխէի աղփանքերու
Որք օրհնէին զիս ի սրտէ:
Ես՝ միւսն ըսաւ, մարդն ազնիւ որ
Զախող բաղդէն կը հալածուէր,
Կը փրկէի պատիւն անոր
Իմ զգուանով սիրանքերէ:
Նոյն ինքն Ասուած
Պասուիրէ հայրաբար
Որ սիրենք միտ գիրար
Եւ ըլլանք ողորմած:

Մտե՛ք մտե՛ք, կանայք զբաժ .
 Գոչեց երկնից սուրբ պահապան,
 Զի ձեռք արհեստն են ողորմած :
 Իմ Աստուծոյս բաւե այդքան .
 Արեւայութեան են արժանի
 Ոյք արցունքներ են չորցուցեր՝
 Պսակ դրած մարտիրոսի
 Կամ լոկ ծաղկի կապած փունջեր :
 Նոյն ինքն Աստուած
 Պատուիրե հայրաբար
 Որ սիրեցն միտք զիրար
 Եւ ըլլանք ողորմած :

ԼԱՖՈՆԹԵՆԻ ԱՌԱԿՆԵՐ

ՀՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՋԻՒՆ

Ամառն ամբողջ զուարթաբար
 Հպուռն անցուց երգելով .
 Երբոր ձմրան փչեց ցուրտ հով
 Զուներ հասիկ մի պաշար .
 Բայց դրացիներն անոր մեջիւն
 Յամբարն ուներ մերեք շաւ .
 Գնաց հպուռն հեկ յուսահաս
 Խնդրել իրմ օգնութիւն .
 «Քուրիկ, ըսաւ, Աստուած վկայ
 Մեռնիմ սովկն,
 Փոխ տո՛ւր ինծի քիչ մը ցորեն,
 Եւ ես կ'երդնում պատուոյս վրայ .
 Հունձնէն առաջ՝ զալ տարի
 Վնարել էեզ մայրն ու շահ :»
 Մրջիւնին սիրտ քեպէտ բարի
 Բայց բնութեամբ եր ազան .
 «Ամառն, ըսաւ, երբ ամենք ժիր
 Կ'աշխատեին, դուն ի՞նչ րիր :» —
 «Շիտակն ըսեմ, էեզ դրացի,
 Ամառն ամբողջ զիշեր ցերեկ
 Զայնս ձգած երգ երգեցի :» —
 «Երգ երգեցիր՝ շաւ աղէկ .
 Ուսի հիմա
 Ցատկե՛ խաղա՛ :»

ԱԳՌԱԻ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Բարձր ի մի ծառ
Ագռաւ աղբարն էր ելած քառ.
Կտուցին մեջ ունէր խոտը

Պանրի կտոր :

Աղուէս աղբար

Հոս առնելով՝ քնաբար
Եկաւ այս կերպ խօսեցաւ.
«Բարի լոյս ձեզ տէր ագռաւ.
Ինչ գեղեցիկ, ինչ գողտիկ
Դուք աչտրուս կ'երեւիք.
Փետուրներնուդ պէս աղւոր
Թէ որ ունիք ձայն սիրուն,
Այս անտառի հաւերուն
Դուք եք անուշտ քաղաւոր.»
Այս խօսքերը ագռաւին
Խելիք գլխէն քռուցին,
Ուզելով ցոյց տալ իր ձայն
Բացաւ մեծկակ մի կտուց,
Բերանէն որսը փախցուց:
Վազեց աղուէսն առաւ զայն
Եւ ըսաւ, «Տէր իմ ազնիւ,
Գիտե՞մ ամեն փաղափուշ
Ապրի անոնց շնորհիւ
Որք իւր խօսքին դնեն ուշ .

Մնաք բարով,

Ապանով

Պանիր մ'արժէ իմ այս խրատ:»

Անմիջ աղուէսն ամօքապատ

Ափսոսալով ուխտեց մեկ մ'ալ

Պեղծ խօսքերու չհաւատալ:

ԾԵՐԱՑԵԱԼ ԱՌԻՒԾԸ

Առիւծն երբեմն անհառներու ան ու դող՝
 Ծերացեալ եւ անկարող
 Ողբար լալով իր ֆաջուքին վաղեմի.
 Հպասակներ իւր ամեն
 Հօր դարձած անոր վասուծ ըլլալէն
 Եղեր էին հիմա իրեն բեւամի:
 Զին գալով կից մի տուաւ.
 Կոտու մըն ալ զարկաւ կով,
 Քայլն ու աղուէս ակռաներով
 Հարուածեցին գինք լաւ:
 Տրտում տնուր բռնաւորն առիւծ ողբալար
 Մոնչել իսկ չէր կրնար,
 Եւ անտրտունջ բեւամանացն համբերէր.
 Բայց տեսնելով որ եւն ալ գայ խորխոսացած
 Գոչէ. «Այս շատ է. մահն է ինձ անհարբէր,
 Սակայն կրկին մահ է կրել եւ հարուած:»

ԵՐԿՐԱԳՈՐԾՆ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՔ

Աւխասեցի՛ք ֆրսնեցի՛ք
 Ոչ պակսի հացն ալ երբէք:
 Երկրագործ մ'իւր մօտալուս մահն զգալով
 Կանչեց որդիքն իրեն եով.
 Զկար վկայ
 Ոչ ոք ներկայ.
 Ըսաւ. «Այս է իմ կսակ.
 “ Արեւ ազարակ
 Զոր մեր պապեր մեզի ծառանգ են բողած
 Զըլլայ ծախե՛ք՝ զի հոն մեծ գանձ մ'է քաղած.
 Ո՛ւր տեղ, ես ալ չգիտեմ. բայց կրնամ դուք
 Գտնել զանի երէ ընեք ջանք եւ փոյք.
 Հունձեքն յետոյ՝ արեւ սկսեք անձանձորոյք
 Բրել պեղել. մեկ տեղ պարապ մի բողուք
 Զոր ոչ յուզած ըլլայ բան:»
 Երբոր հայրը մեռաւ՝ որդիքը խօսք մեկ
 Փորեցին արեւ ամեն կողմ այնպէս աղկի
 Որ այն տարին բերաւ առատ հունձք եւ շահ.
 Իսկ գանձ չկար հոն քազուն,
 Բայց հայրն էր շատ իմաստուն
 Որ չմեռած իւր որդւոց ցոյց տալ ուզեց
 Թէ աւխասանքն է գանձ մեծ:

ՄԱՆ ԵՒ ՓԱՅՏԱՆԱՐ

Ձախերով ծածկուած մէկ բռնառ փայտահար՝
 Միջաբեկ նեծելով կապոցին եւ ամաց
 Ծանրութեանը ներքեւ, բոյլ փայլով եւ կամաց
 Ժամանել ջանայր իր մրոսած տաղաւար:
 Վերջապէս ուժաքափ՝ ընկնուած ցաւէն ալ,
 Վար դնէ իր կապոց ու սկսի մտնայլ.
 Ծնեյէն ի վեր ի՛նչ հանոյ՞ Ե վայելած.
 Միքե՞ կայ յաշխարհի իրմէ նեք արարած.
 Հաց չունի շոտ անգամ, իսկ հանգիստ ոչ բնաւ.
 Կին որդիք. բռնի տուրք, քաղց, ծարաւ,
 Հարկահան, պարտաւոր
 Նկարեն իւր աչիքն ճիշտ բռնառ իւր պատկեր.
 Յուսահատ կանչէ զմահ... մահն ալ գայ փութապէս,
 Հարցրնէ, «Բարեկամ, ի՞նչ կ'ուզես դու ինձ».—
 «Սա կապոցս իմ տալիս բեռընել ինձ օգնէ,
 Բայց խնդրեմ շտապես:»

ԿԱՂՆԻՆ ԵՒ ԵՂԵԳՆ

Օր մը կաղնին այսպէս քսաւ եղեգին.
 «Բնութեան դէմ բողոքելու
 Շատ իրաւունք ունիս դու.
 Բեզ համար բեռ մ'է անագին
 Փոքր ու քերեւ քփոց սարեկ.
 Ոչինչ հովէն որ դուն ուրեք
 Կը բեկբեկէ ջրին երես՝
 Ծոռլ գլուխդ սփալուած ես.
 Միջոյեւ ճակատն իմ Կովկասուն հաւասար
 Արեգական նառագայրից դիմահար,
 Մերկներու ծալքէ ճգունք.
 Ամեն սիւզ՝ քեզ ուժգին հողմունք,
 Ամեն հողմ ինձ բուրի զեփիւռ:
 Թէ անէիր ոստերուս տակ լայնասփիւռ՝
 Որով մարգերս այս տուրջ ծածկեմ,
 Պատշապանքի զեք հողմոց դէմ,
 Եւ նեղուէիր գեթ ոչ այսօր.
 Բայց հովերու իշխանութեան
 Բուսնիս յահալս վայրեր խոնաւ.
 Քանի՛ բնութիւնն է քեզի դէմ անիրաւ:» —
 «Արդարեւ դուք բնական բուրս սիրտ ունիք,
 Պատշապանեց եղեգնիկ.
 Բայց իմ մասին եղե՛ք անհոգ.
 Ոչ են հողմեր ինձ նկատմամբ անողոք
 Որքան ձեզի դէմ ոխերիմ.
 Ես խոնարհիմ բայց ոչ փերիմ:

Մինչեւ ցայսօր դիմադրեցիք աննկուն
Հովերուն բուռն հարուածներուն,

Զծռելով գլուխ հպարտ,

Բայց սպասեմք մինչ ց'աւարտ:»

Հագիւ կ'ըսէր այս, անգուման

Հորիզոնին ծայրէն յայն կողմ

Սարսափելի այնպէս մէկ հողմ

Կը խոյանայ որուն նման

Ոչ յղացած էին ամպրոպք բեւեռի:

Կաղնին անխախտ մնայ, եղեգր ծռի.

Հովը քափէ իւր ճիգն ամեն

Եւ վերջապէս խէ խզէ արմատէն

Զայն որուն գլուխն էր երկնին մերձաւոր

Եւ հասնէին ոսկերն յանդունդ մահու խոր:

ՔԱՂԱՔԱՅԻ ՄՈՒԿԸ ԵՒ ԳԵՂՋՈՒԿ ՄՈՒԿԸ

Քաղաքացի մուկը մի օր
Գեղջուկ մուկին տալով հրաւեր՝
Շեղ պատուով հրամցուց անոր
Խորհիկներու մրնացորդներ:

Պարսկաստանի գորգին վրայ
Սպաս սեղան պատրաստուած կայ.
Ինչ ցնծութիւն, ինչ կերուխում
Ա՛լ՝ գուշակել ձեզի քողում:

Խնջոյքն եղաւ փառաւոր շատ
Քանզի ամեն բան էր առատ.
Բայց ընթերցին մինչդեռ այսպէս՝
Վրդովեց մէկն իրենց հանդես:

Սարսափեցան երբ լսեցին
Որ սրահին դուռը խառնեն.
Մեկէն կծկեց քաղաքացին,
Վազեց գեղջուկն ալ ետեւէն:

Երբ դադրեցաւ շուկն՝ ի տես
Նկան մկներն անմիջապէս.
Քաղաքացին քսաւ. - «Քուրիկ,
Շարունակեմք է՛կ մեր խորհիկ:»

«Բաւական է, գեղջուկն քսաւ,
Վաղը դու ալ ինձի եկո՛ւր.

Ես կարող չեմ տալ՝ քեզ՝ իրաւ
Այսօրան պարտաւ յորդ կերակուր,

Սակայն հանգիստ հացիկն իմ չոր
Գոնե կրծեմ ւրտով ուրախ.
Թո՛ղ վար անցնին հաճոյք բոլոր
Զոր. խանգարեմ միշտ ան ու վախ:

ԺԱՆՏԱԶԱՐԵԱԼ ԱՆԱՍՈՒՆՔ

Այն ախտն անեղ՝ սարսափելի
Զոր մերք երկինք բարկութեամբ քի
Յղեն յերկիր

Պատուհասել մարդոց ոնիր,
Որոյ անունն իսկ ազդէ ան՝
Ժանտամահ,
Որ զդժոխ

Ի մի աւուր առնեմ նոխ,
Տայր անասնոց մեծ կոտորած:
Թեպէք ամենքն ալ բռնուած
Բայց մեռնեին ոչ ամենքն ալ:
Իրենց կեանքին հիւծեալ մաշեալ
Ոչ տանին հոգ եւ խնամ:

Գայլ եւ աղուէս ոչ ունեին ախորժակ
Եւ խնդրեին ոչ անմեղ որս փափկահամ.
Ոչ զիւրն քնկեր կանչէր տատակ,
Զկար իսկ սեր, հետեւաբար
Զուարթութիւն ալ չկար:
Առիւծն ուտի կազմեց ժողով.
«Ո՛վ բարեկամք իմ սիրելիք,
Ըսաւ, երկինք կամելով
Պատժել մեղքեր մեր անօրէն
Թափեմ ի գլուխ մեր այս չարիք:
Ո վ մեղապարս ե՛ք քան զամեն
Թո՛ղ բարկութեան երկնային
Զանձն իւր գոնե կամովին.
Թերեւս յայնժամ լինի հանուրց փրկութիւն:

Կարդացեր եմ պատմութեան յեջ
 Թե այսպիսի վճանգաց մեջ
 Ոչ այսպիսի զոհեր լինին ապարդիւն.
 Հապա՛ խսիւ եւ անաչառ
 Քննենք խղճին մեր վիճակ:
 Ես՝ որկրամոլ զիմ ախորժակ
 Յագեցուցի՝ պատառ պատառ
 Ընելով շատ ոչխար՝ գառնուկ.
 Եւ ի՞նչ յանցանք ունեին, ոչինչ, եղո՛ւկ.
 Դիպեցաւ ինձ նաեւ շատ հեղ
 Ուտել հովիւն ալ միտեղ:
 Արդ քե հարկ է զանձն իմ զոհել, կամ պատրաս.
 Սակայն կարծեմ իւրաքանչիւր ոք պարտի սոս
 Լինիլ ինձի պէս իւր անձին ամբաստան.
 Զի բոս վնաս առդարութեան
 Թո՛ղ կորչի նա որ է քան զայլրս մեղաւոր:»—
 «Ո՛վ Տէր, վեհանձն բազաւոր,
 Ըսաւ աղուեսն, այդ կասկածներ
 Նշան են մեծ բարութեան ձեր.
 Եւ ի՛նչ, միքե՞ ուտել ոչխար՝
 Անպիտան ցեղդ այդ ու սխմար,
 Կարծեմ մեղք է. ոչ, ոչ, զիրենք լափելով՝
 Արեայ, քրած եմ իրենց մի մեծ պատիւ.
 Իսկ անօրէն անոնց հովիւ՝
 Այն անմտաց ազգէն գոյով
 Որ անասնոց վրայ իշխել յանդգնի,
 Հազար մահու է արժանի:»
 Աղուեսն ըսաւ միայն այսչափ
 Եւ շողոքորթք ալ զարկին ծափ:
 Վագրին, արջուն եւ միւս հզօր պետութեանց

Ոչ իշխեցին բննել խիղներն անբախանց.
 Ամեն ցեղ խեղ եւ անառակ,
 Մինչեւ շուններն իսկ հասարակ,
 Իրենց ըսածին համեմատ
 Էին մեղմեկ սուրբ անարատ:
 Էւն ալ եկաւ բոս իր կարգին,
 Ըսաւ. «Ունիմ յիշատակ հին եւ աղօս
 Թե անցնելով օր մը վանքին դաշտին մօտ,
 Քաղցն ու առիթ, քարմ խոտ մարգին,
 Կարծեմ ի՞նչ յալ մշտելով զիս սասանայ.
 Լեզուիս լայնքին չափ այդ խոտէն ես կերայ.
 Եւ զի հարկ է շիտակն ըսեմ,
 .. Այս քրածս եր իրաւանց դեմ:»
 Այս խօսուեղենք արմատեալ յոյժ ամեն ոք
 Ըրին իշուն դեմ բողոք.
 Գայլ մի որ եր ի՞նչ շատ դպիր՝
 Յայտարարեց քե զոհել պէտք եր՝ այդ զագիր
 Քոտոս եւ կուրս աւանակ
 Որ ընդհանուր չարեաց պատճառն եր միակ.
 Իշուն փոքրիկ մեղք արժանի
 Վնասեցաւ կախաղանի.
 Ուրիշին խո՛սն ուտել, յանցանք քեական,
 Մահն եր միայն բաւական
 Քաւել անիրն անաւոր
 Եւ յիշաւ ի ան եղաւ եւ նահապակ:
 Ըստ որում դու սկար ես կամ զօրաւոր՝
 Դատաւորք սեւ կ'ընեն զեզ կամ ներմակ:

ՃԳՆԱԻՈՐ ՄՈՒԿԸ

Արեւելի սրբոց պատիւի կը գրեն
Թե զգուելով աշխարհային հոգեւեհն,

Առանձնացաւ մուկ մը գործ

Հոլանտայի պանրի խոր:

Համասարած լուսիւն խոր

Պատեր իր շուրջը բոլոր.

Հոն ապրելով այս նգնաւոր մեր նորեկ,

Ակռաներով՝ քաքերովն այնպէս աղեկ

Աշխատեցաւ որ համբարեց քիչ օրէն

ձգնաւանին մէջ քե սեղան քե պարէն.

Ա՛լ ի՛նչ պիտէր. եղաւ պարտաւ ու գեր շատ.

Անոնց տալ վարձ բազմառաս

Բարին Աստուած

Որք նուիրել զանձինս իրեն եւ ուխտած:

Բարեպաշտին օր մը եկան՝

Ողորմութիւն խնդրել փոքրիկ,

Պատգամաւորք ազգին մկան

Որ երբային տառաշխարհիկ՝

Գտնել մի նար

Ընդդէմ կատուի ցեղին չար.

Մկնախաղաք պաշարէր քննաւի.

Հարկ եղած էր մեկնիլ առանց դրամի

Զի հալածեալ ազգին վիճակն էր քշուաւ.

Եւ գիտնալով քե օգնութիւն անպատեհաւ

Չորս հինգ օրէն կը հասներ.

Խնդրէին դոյզըն մի նուէր:

Բայց մեծակեացն իրենց ըսաւ.

Բարեկամք իմ, այս աշխարհիս հետ բնաւ

Այլ եւրս գործ չունիմ ես.

Խեղճ նգնաւոր մը ինչպէ՛ս

Կրնայ լինիլ ձեզ նեցուկ,

Ինչ կարող է ընել, եղո՛ւկ,

Թե ոչ աղօթք ուղղել յերկին

Որ օգնէ ձեր նպատակին.

Եւ ես յուսամ

Թե աղէտից ձեր տանի խնամ:»

Եւ ըսելով այսքան միայն

Դուռը գոցեց սուրբ նորոնձայն:

«Զո՛վ ակնարկէ՝ գիտէք արդեօք

Օրինակս այս մկան աննոգ,

Քահանայ մի. ոչ պուճա մի

Զի քահանան կարծեմ քե միտէ կ'ողորմի:

ՊԱՐԱՊՈՅ ԺԱՄԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Աշխոյժն Աճճիկ՝ գողսր ու փափուկ
Բայց հասակով եր կարեւուկ.
Զմնադն Արեւմ սորա ներհակ
Ունեւ շէնդ բարձր հասակ.
Երկուսին մեջ պարոն Արամ
Կը վարաներ յոյժ տարամ.
Ու հարահաս հարցուց մի օր
Իր ձերունի կնիհօր:—
«Սիրեմ զԱճճիկ, պաշտեմ զԱրեւմ,
Զո՞րք մերժեմ, զո՞րն ընտրեմ:»

Յեւ խորհելոյ խորունկ երկար՝
Ծերունկն ըսաւ ծանաբար.
«Կարծեմ կ'ըլլաս դու երջանիկ
Թե հարս առնես քեզ զԱճճիկ.
Լաւ է ընտրել ըստ իմաստուն,
Երկուց չարեաց փոքրագուն:»

✽

Ամուսնանալ փափաւելով
Պարոն Խաչիկ՝ նախ ապահով
Ըլլալ կ'ուզէր քե մի կնոջ
Որպիսի ձիրք վայլեն կամ ոչ.
Խորհրդասու կին մը պառաւ

Նորա սապէս խրատ տուաւ:
«Գեղեցիկ կ'իճն է անգգայ.
Թե ուսեալ է վրադ խնդայ.
Հարձնս կ'իճն է մի բռնաւոր,
Աղիւսն ընէ զեզ չխաւոր.
Լեզուանի կ'իճն է չարախօս.
Թե անխելք է՝ փորէ ֆու փոս.
Տգեղն ունի նախանձ ու դիս,
Պառաւն է չար քան զդժոխ.
Ազնուական կ'իճն է յիմար
Թե որ չունի շատ սիրահար.
Բարեպաշտն է ձանձրացուցիչ,
Իսկ խելացի կ'իճն է շատ փիչ.
Ասոնց մեջէն ընկեր յարմար
Ընտրէ՝ հապա քեզի համար:»—
«Շնորհակալ եմ, բարի՛ կ'իճն,
Ըսաւ տղան պառաւիկին,
Թո՛ղ կ'իճն առնէ՝ ով խնամի
Սասանային լիցիլ կամի:»

✽

Ո՛վ կը յարգէ միայն ոսկին
Պաշիւ բերէ իր վարկին.
Ո՛վ կը սիրէ միայն զիւր կին
Նորա բաժինն է երկին.
Իսկ ո՛վ սիրէ կնոջ ոսկին
Ոչ վարկ ունի ոչ երկին:

✽

Ազնուական մի հարուստ շատ
Բայց կարծրասիրտ եւ ժայս,

Շինել տուած էր իր արձան
 Մարմարիոցէ՝ խիստ նման.
 Գովէին զայդ նարսար շինուած
 Բարեկամներ զարմացած.
 Անոցմէ մին կասեցաւսէր՝
 Յոյց տալով հարբ՝ կ'ըսէր.
 « Ճիշտ իր տիրոջը կենդանի
 Հոգւով մարմնով նմանի:»

✱

Նկեղեցւոյ բեմին վրայ
 Վարդապետք պոռայ՝ գոռայ.
 Գաւազանը շարժե գոռոզ
 Որ յայտնուի քէ տայ հարոզ:
 Կասարեին հոն իրենց ուխտ
 Մէկ երկու կին, չորս հինգ պանդուխտ
 Նւ պառաւիկ մը կիսամրափ.
 Ժողովուրդն էր միայն այսչափ:
 Ու վարդապետք ծայրէ ծայր
 Երանութեանց շարքը կարգայր.
 Երանի՛ տայր որ յիրաւի
 Մեռնի նոթի եւ ծառաւի,
 Երանի՛ ում նախասուի շատ,
 Նւ որ հոգւով խելով աղփատ.
 Երանի տայր միշտ երանի
 Առատ առատ ամէն բանի.
 Վերջապէս կին մը ձանձառացած
 Բանայ ձեռքեր բազկասարած.—
 «Նւ երանի՛ անոր, գոչէ
 Որ հարողին այս ներկայ չէ:»

✱

Համբալ աննշան
 Մի պատկերահան՝
 Կ'ըսէր ինձ մի օր.—
 Պատերուն բոլոր՝
 Զարնել տուր ներմալ,
 Նւ ես լաջողակ
 Գծեմ վերէն վար
 Պատկերներ նարսար:—
 Պարոն, քսի ես,
 Լաւ է նախ գծես
 Նւ վերջը խկոյն
 Զարնեմ ներմալ գոյն:

✱

Դռնակին առջեւ նստելով՝ խեղճուկ
 Արսասուէր մասաղ կնիկ մը գեղջուկ.
 Նոյն պահուն ահա զիւղին մեծ տեսէր
 Փորը տնկելով փողոցէն կ'անցներ.—
 «Աղջիկ դու, հարցուց, շարժելով ի գուր,
 Ինչո՞ւ այսպէս լատ ու վայ տաս հոգուդ».—
 Մտէն արձակեց խեղճը հառաչ մեծ.—
 «Էրիկ մարդս, քաւ, ինձի տուաւ ծեծ:»
 Մարդը որ ներսն էր եւ ականջ կուտար.—
 «Տէր պապա, գոչեց, սուտ է, մի՛ հաւատար.
 Տփեցի իրաւ մէկ երկու ապսակ
 Բայց բաշկիմակովս, իբրեւ լոկ կասակ:»
 Տեսէրն ալ. «Աղջիկ ամօք չէ որ լաւ,
 Թաշկիմակով ծեծն է խաղ անվնաս:»—
 «Բայց դու չես գիտեր, Տեսէր միամիտ,
 Կինն քաւ, քէ իմ երկըս կոպիտ
 Խնջելու համար՝ բաշկիմակի տեղ
 Կը գործածէ միշտ իւր մասներ ուժեղ:»

ՅԵՇԱՏԱԿ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳԷՍԻՆ

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ

Մայիս 23/5 Յունիս 1910

ՏԵՍԻՆԸ

Ուխտի գացի այն լուսածիկ
Հոգիներուն որ կը լածին
Թափառական ու երազիտ՝
Նախկին սիրոյ քառէն կտրոս:
Մշուռապատ բլուրն ի վեր
Բարեբարաց խումբ մ'երեւեր.
Իրենց հակաս լուսով շողար,
Եւ աչիներէն սեր՝ գուր տեղար:
Անոնք Մուրաս-Ռափայելի
Հոգիքն էին վեհ՝ պաշտելի
Եւ անոնց մօտ զուարթացին
Մխիթարայ խաչար հոգիքն:
Սիրքս վառեւ բոցով անմաւ.
Ո՛հ իսկին եր զարմանահրաւ
Զոր դիտէի նետափրփր՝
Բազկասարած ու ծնրադիր:
Ա՛լ հաւատով եղայ վստահ
Թե բարեբարք եմ միտ անմահ...
Ո՛վ ընկերք իմ՝ երախտագէս
Իրենց անունն օրհնեմ խղիւղ:



ՑԱՆԿ

Վերլուշում	Էջ
Մ. Աճեմեան (Կենսագրական)	Է
Բանաստեղծը (Քրալստական)	Թ
Երգ	25
Հնչեակ	26
Հունը	27
Խորտակումը աշտը	28
Իմ հագուստը	29
Փրկութեան ծաղիկ	33

ՊԷՐԱՆԺԷԻ ԵՐԳԵՐ

Ամիրան	35
Մամիկ	38
Կոյր մայրը	41
Բարին Աստուած	43
Բանալիք Արքայութեան	45
Կրթութիւն աղջկանց	48
Ողջ մեռեալը	50
Ռամիկը	52
Դողցումը շէշը	55
Դարուն եւ աշուն	57
Աստուած տայ	59
Բարի պապը	61
Դժուրեան երկու թոյլեր	64

Լ Ա Ֆ Օ Ն Թ Է Ն Ի Ա Ռ Ա Կ Ն Ե Ր

Ճգրուռն եւ Մըջիւն	67
Ագռաւ եւ Աղուէս	68
Ծերացեալ Առիւծը	70
Երկրագործն եւ իր որդիք	71
Մահ եւ վախճան	72
Կաղնին եւ Եղեղն	73
Քաղաքացի մուկը եւ Դեղջուկ մուկը	75
Ժանտաճարեալ անասունք	77
Ճգնաւոր մուկը	80
Պարագոյ ժամերու համար	82 մինչեւ 85
Տեսիլը	86



ՀՀ Ազգային գրադարան



NL0161079

